


4678

281.64

C-614

1920



2001



2090

ԲՍԱՆՅԻՆ ԳԱՄԵԱԿ

281-64

Ե-61Ա.3

ՍԱՐԳԻՍ աւագ Բահանայ ՇԻՈՅԵԱՆԻ

ՆԿ

ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ-ԴՊՐՈՑԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

[Handwritten signature]
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ

628126

ԿԱԶՄԵՑ

Բ. ԱՅՎԱԶԵԱՆ

Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ԳՐՈԳՐԵՍ», Լ. Գոգոսեանի.

1930

(15765-57)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՅՈՒՄԸ

30317-4.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՅՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՅՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՅՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՅՈՒՄԸ

85-5181



ՄԱՐԳՐԻՍ ԱՒԻԳ ԲԱԶԱՆԱՅ ՇԻՈՅԷԱՆ



ՅԱՌԱԶԱԲԱՆ

Մարդ մի առանձին հաճոյք է զգում երբ մեր հասարակա-
կան կեանքի մէջ երևան են զալիս համեստ գործիչներ, որոնք
իրենց գործունէութեամբ ոչ միայն բարձրացնում են ժողովրդի
կուլտուրական վարկը, այլ և հոգեպէս մխիթարելով նրան, նրա
հոգու մէջ միշտ վառ են պահում ոգեկորութեան անշէջ հուրը:
Մեր կեանքի մոռյլ ու դաժան սպարիզում, ուր զարեւրից իվեր
բունութիւնն ու խաւարն է տիրել և վտարուել է ազատ խօսքն
ու գործունէութիւնը՝ արդարև ծանր և դժուարին է այն անհա-
տի դրութիւնը, որը ասպարէզ է իջնում ամոքելու թշուառ ժող-
վրդի արցունքը, սպեղանի դնելու նրա թարախոտ վէրքին և մը-
տաւորապէս կրթելու նրան:

Փշալից ու տանջալից է նրանց ճանապարհը, որովհետև մեր
դառն իրականութեան մէջ լաւն ու ազնիւը, արդարութիւնն ու
շիտակութիւնը հեշտութեամբ չեն պատուաստում մեր ժողովրդ-
դի մէջ և այդպիսի գործիչները կամ թուլացած ընկնում են կէս
ճանապարհին և կամ յուսահատ յետ քաշուում և ասպարէզը թող-
նում անարժան մարդկանց:.. Սակայն գտնւում են մարդիկ, ան-
հատներ, որոնք մոռացած իրենց անձը, չվախենալով ոչ մի ար-
գելքից, խիզախ կերպով հանդէս են գալիս և կատարում իրենց
բարոյական և հասարակական պարտականութիւնները: Այդպիսի-
ներն ահա արժանի են գովեստի և հասարակական լայն խաւերի
խրախուռանքների: Եւ ահա հասարակութիւնն էլ պարտաւոր է
նրանց քաջալերել, սիրտ տալ, թե ու թիկունք դառնալ՝ որպէս-
զի նրանց ցանած բարի սերմերն աճեն, մեծանան, արմատ բը-
նեն: Նա պարտաւոր է այդպիսիների անունը յաւերժացնել՝ զրի
առնելով, որ յետնորդներին ժառանգութիւն մնայ նրանց օրինա-
կելի կեանքն ու ազնիւ գործունէութիւնը:

Ահա այդ սկզբունքն է եղել պատճառ, որ թիֆլիսի Նորա-
շէն ս. Աստուածածին եկեղեցու ծխականներն և մի խումբ համա-
կրօններ, ծխական ժողովի որոշմամբ՝ ի նկատի ունենալով նոյն


եկեղեցու միաբան արժ. Սարգիս աւագ քահանայ Շիրոյեանի օգտակար գործունէութիւնը՝ թէ որպէս քահանայ և թէ որպէս հասարակական գործիչ, որոշել են մի համեստ յորելեանով պատուել նրան և գրի անցկացնելով նրա կենսագրութիւնն ու գործունէութիւնը՝ պատմութեան սեփականութիւն գարձնել:

Հայր Շիրոյեանի գործունէութիւնը մի բացառիկ երեոյթ է ներկայացնում մեր, մանաւանդ հոգևոր ամուլ աշխարհի մէջ: Նրանում բուռն կերպով շողկապուած են հաստատուն կամք, կորովի եռանդ, անվճառ ոգի և բուռն ցանկութիւն մեծ թափով առաջ տանելու հասարակական գործերը, որի համար պերճախօս վկայ են այն պաշտօնական դոկումենտները, որոյսիններն առաջ են բերուած այս գրքոյլի մէջ: Հայր Շիրոյեանը, համեստութեան քողի տակ թագնուած, անաղմուկ արել է այն, ինչ թելադրել է նրա սիրտն ու հոգին օգտակար լինելու թէ իւր հօտին և թէ իւր ազգին: Նա արտասուել և ուրախացել է իր ժողովրդի հետ, նրա վշտին ու դառնութեանը մասնակից եղել: Հայր Շիրոյեանը անգաղար դիմել ու խնդրել է այս ու այն հարստի, հիմնարկութեան և ստացած նուէրներով եկեղեցիներն ու վանքերը շէնացրել, ամոքել թշուառի ցան ու կարիքն և առաջ է տարել մատաղ սերնդի կրթութեան դաստիարակութեան գործը, բանալով մի շարք դպրոցներ մանաւանդ այնպիսի վայրերում, ուր մայրենի լեզուին անխուսափելի վտանգ էր սպառնում իսպառ մոռացման: Եւ նրա ջանքերը զուր չեն անցնում, և օտարախօս այդ վայրերում լսում են մատաղ սերնդի սրտերից մայրենի բարբառով հնչուող ուրախ երգերն ու տաղերը...

Ահա նրա անբաժան յատկութիւնները, որպիսիները նա ոչ թէ խօսքով ու քարոզներով, այլ գործնականապէս պատուաստել է մեր ժողովրդի մէջ և որպիսի գործունէութիւնը ոչ միայն պատիւ է բերում իրեն, ՚. Շիրոյեանին, այլ և այն հասարակութեանը, ուր գործում է նա:

293

Ա.



Սարգիս աւագ քահանայ Շիրոյեանը ծնուել է Թիֆլիսում, 28-ին մարտի, 1866 թուի: Նա՝ Ներսէս քահանայ Գրիգորեանի, որ նոյն է Շիրոյեանի և Նունէ Միրվելեանի որդին է: Հայրը պատուաւոր քաղաքացու կոչում ունէր, երբ քահանայ ձեռնադրուեց Թիֆլիսի մօտակայ Չեզվի գիւղի համար: Նա այնքան

ՀԱՅՐ ՇԻՐՈՅԵԱՆԸ մանուկ հաս. շնչին արդիւնք էր ստանում, որ հազիւ կարողանում էր իւր բնտանիքի օրական պարէնը հայթայթել և այդ է պատճառը, որ մանուկ Սարգսին վիճակուեց հէնց փոքրութիւնից աստանդական, չարքաշ կեանք վարել: Նա դեռ չորս տարեկան էր, որ յանձնուեց Խորէն Ստեփաննէի զիշերօթիկ ուսումնարանը, որ այն ժամանակ գտնւում էր Աբաս-Աբաթեան հրապարակի վրայ. Արղութեանի տներում: Նա այդտեղ երեք տարի միայն մնաց, այնուհետև եօթ և կէս տարեկան հասակում ընդունուեց Ներսիսեան դպրոց իւր կրթութիւնը շարունակելու, իսկ զիշերօթիկ մնում էր արքունական պալատի ծառայող աստիճանաւոր Աղէքսանդր Աւետիքեանի մօտ:

Բայց մանուկ Սարգսին վիճակուած չէր վերջացնելու Ներսիսեան դպրոցի դասընթացը և դառն ճակատու-

գիրը այլ բան էր անօրինել նրա համար: Նա դեռ ութ տարեկան էր, երբ հայրը յանկարծամահ եղաւ 35 տարեկան հասակում և բացի Սարգսից թողեց նաև երկու աղջիկ՝ 6 և 10 տարեկան ամենաչքաւոր և դառն վիճակում: Այդ օրուանից խիստ ծանրացաւ Սարգսի դրութիւնը, սակայն լինելով ուշիմ, աշխատասէր և աչքաբաց երեխայ, նախախնամութեան հովանաւորութեան տակ խնամուեց և նա հետզհետէ մեծանալով՝ զբաւեց յայտնի անձնաւորութիւնների ուշադրութիւնը և այդպիսով չքաւոր ճակատի բախտի խաղալիք: Լօր մահուանից յետոյ՝ չթողնելով Ներսիսեան դպրոցը, միևնոյն ժամանակ դպրութիւն էր անում Նորաշէնի եկեղեցում և մի քանի կուպէկներ վաստակելով հասցնում մօրը և քոյրերին. իսկ կիրակի օրերը նոյն եկեղեցու երեցփոխի խանութից ապրանք ստանալով՝ առևտուր անում և աշխատած կուպէկները տալիս իր ընտանիքին: Ներսիսեան դպրոցում միայն հինգ տարի մնաց՝ հասնելով մինչև չորրորդ դասարան: Այնուհետև իւր փեսայ Սեդրակ քահանայ Տէր-Մարտիրոսեանը՝ տանում է նրան Սղնախ: Նուկրիան քաղաքամասում, իւր փեսայի բաց արած դպրոցում ուսուցչութիւն անում և եկեղեցում դպրութիւն: Երկու տարուց յետոյ վերադառնում է թիֆլիս: Նա արդէն պատանեկական հասակումն էր. նրա մէջ վառուում էր մի առանձին եռանդ դէպի ինքնակրթութիւնը և ուսման ծարաւը, որը բուռն կերպով լափում էր նրա հոգին: Նա մեծ թափով անձնատուր է լինում ընթերցանութեան և գրքեր ու լրագրեր կարդալով՝ լրացնում իւր թերի ուսումը: Այստեղ նա Ներսիսեան դպրոցի վերջնական քննութիւն տալու համար դասեր է վերցնում Գիւտ ա. ք. Աղանեանից և ուրիշներից, որոնք նկատելով նրա առանձին եռանդն ու ընդունակութիւնը ամեն կերպ աջակցում են նրան առաջ գնալու: Այդ միջոցին Ներսիսեան դպրոցի հոգաբար-

ձու Եւանդուլեանի և Արիմեանի յորդորմամբ նա ուղարկուում է Թէլէթ ուսուցչութեան և դպրութեան, ուր նա 12 տարի շարունակ մնալով միևնոյն ժամանակ և կատարում է զիւղական գրագրի պաշտօն, չմոռանալով նաև իւր ինքնակրթութեան գործը: Այդ ժամանակ, երբ մի անգամ Արիստակէս եպիսկոպոսը ամառանոց է գնում Շաւնաբաթ ուխտատեղին, ծանօթանում է Շիոյեանի հետ և նկատելով նրա առանձին ընդունակութիւնները, ցանկութիւն է յայանում ուղարկելու նրան էջմիածնի ձեմարանում իր ուսման թերին լրացնելու, որի համար և խնդրում է ձեմարանի նորահաստատ տեսուչ Արշակ Նահապետեանին, սակայն պատանի Սարգիսը, ի նկատի ունենալով մօր և քոյրերի անխնամ վիճակը, հրաժարւում է գնալու և գործը մնում է անկատար:

Այդ օրուանից Արիստակէս եպիսկոպոսի ուշադրութիւնից չէ վրիպում Սարգիսը և կամենում է նրան քահանայ ձեռնադրել: Թէլէթ ուխտատեղու եկեղեցուն հարկաւոր էր մի սրտացաւ և ընդունակ ծխատէր քահանայ, այդ պատճառով Թէլէթի ծխատէր Տէր-Մարտիրոսին տեղափոխում է Սղնախի Կակաբէթ գիւղը, իսկ Թէլէթի համար կամենում է ձեռնադրել Սարգսին. բայց մինչև ընթացք կըստանար ձեռնադրութեան պաշտօնական գրագրութիւնները, Մակար կաթողիկոսի կոնդակով, Մարտիրոս քահանան, նրա բողոքի հիման վրայ, վերադառնում է նորից Թէլէթ և Արիստակէս եպիսկոպոսին չի յաջողում իւր ցանկութիւնը՝ ձեռնադրելու Սարգիսին քահանայ: Շուտով սրբազան Արիստակէսը թողնում է առաջնորդական պաշտօնը և նրա յաջորդ Մամբրէ եպիսկոպոսը նոյնպէս նկատելով Շիոյեանի ձիրքն ու ընդունակութիւններն առաջարկում է ս. էջմիածնի սինօդին ձեռնադրել նրան քահանայ Սղնախի ս. Գէորգ եկեղեցու միաբան և կից զիւղերի հովիւ: Այդ հրամանը ստացւում է 1893 թուին:

Այդ ժամանակամիջոցում դպիր Սարգիսը ծառայում էր Թիֆլիսի Նորաշէն եկեղեցում: Նորաշէնի ծխականները, սրտանց զրաւում են նրա ժրութեամբ, ընդունակութեամբ և ազնուութեամբ և խնդրամատոյց են լինում ամիջապէս ձեռնադրելու Շիոյեանին Նորաշէն եկեղեցու միաբան և օգնական ծերունի Տէրտէրեան քահանայի: Հոգևոր իշխանութիւնը, տեսնելով Նորաշէնի ծխականների բուն ցանկութիւնը, յարգում է նրանց խնդիրը և 1893 թուի յուլիսի 24-ին, ներկայ Վեհափառ կաթողիկոս Տ. Գէորգ եպիսկոպոսի ձեռքով ձեռնադրուած Սարգիս քահանան՝ նշանակում է իբրև միաբան Թիֆլիսի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու:

Այդ օրից արդէն սկսում է հայր Շիոյեանի քահանայական ու հասարակական բեղմնաւոր գործունէութիւնը:



Բ.

Քահանայական կոչումը ընդունելով հայր Շիոյեանը գտաւ իւր առաջ գործունէութեան լայն ասպարէզ: Նա ըմբռնեց, որ քահանայական վեհ կոչումը՝ ծանր պարտականութիւններ է դնում նրա վրայ, ով ստանձնում է այդ պաշտօնը: Նա զղաց դէպի ժողովուրդն ու դէպի եկեղեցին ունեցած պարտաւորութիւնները և ահա առա-

ջին իսկ օրերից ցոյց տուեց, որ ինքը արժանի է այդ կոչմանը:

Մարդկային հոգու վրայ երբեմն անսպասելի որևէ դէպք խոր ազդեցութիւն է գործում և խթան դառնում նրա ամբողջ կեանքի և գործունէութեան: Նման մի դէպք պատահում է նաև հայր Շիոյեանի հետ: Նոր քահանայական կոչումը առած ժամանակ, մի օր, Թիֆլիսի թեմի առաջնորդ Տ. Գէորգ եպիսկոպոսը Բեղղեմէմի եկեղեցու գաւթից զիտում է իւր առաջ փոռուած եկեղեցիները և նկատում է, որ Նորաշէն եկեղեցու կաթողիկէի և գաւթի վրայ ծառեր էին բուսել և ճիւղեր արձակել: Սրբազանը կանչում է իւր մօտը կանգնած նորընծայ Շիոյեանին և ասում.

— Տեսնում ես այն ծառերը:

—Ի՞նչ ծառեր, սրբազան հայր, պատասխանում է հ Շիրոյեանը:

—Ձեր եկեղեցու վրայի ծառերը: Աստուծոյ տաճա-
րը այդ գրութեամբ չեն պահում:

Այդ խօսքերը շատ խոր տպաւորութիւն են գործում
նորընծայ քահանայի հոգու վրայ ու նրան գիշեր ցերեկ
հանգստութիւն չէին տալիս: Նա մտածում է բարեզար-
դել իւր եկեղեցին թէ ներսից և թէ դրսից, սակայն ե-
կեղեցին նիւթական ոչ մի տպահովութիւն չունէր, մինչ-
դեռ ծախսերը մեծ էին:

Սակայն տէր Սարգիսը չի յուսահատուում: Նա դի-
մում է բարեպաշտ անձնաւորութիւններին և հասկացնե-
լով նրանց սրբավայրի բարձր նշանակութիւնը, խնդրում
է նուիրարեութիւններ անել: Եւ նրա ջանքը զուր չէ
անցնում: Եղբ. Կարապետ և Բեգլար Վարդանեանները սի-
րայօժար ձայնակից են լինում տէր հօր յորդորներին և
եկեղեցին արտաքուստ նորոգում, ծախսելով մօտ 7000
բուբլի, չնայած սկզբնական նախահաշուին, որ 3500 ր.
էր կազմում: Իսկ եկեղեցու ներսի նորոգութիւնը՝ մար-
մարեայ քարից սեղանը և տոմեա քարից յատակը յանձ-
նառու են լինում Յովհաննէս Թամամշեանը, Նիկողայոս
Բայսողոզեանը և Սարմէ Թամամշեանը, ծախսելով 3000
բուբլի:

Թիֆլիսի թեմի առաջնորդը տեսնելով նորոգուած
Նորաշէն եկեղեցին տալիս է իր շնորհակալական և օրհ-
նութեան 15 մարտի 1897 թ. № 210 հետևեալ գրու-
թիւնը.

Միաբանի Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցւոյ
Հայոց Տփլիսի քաղաքի, Արժանապատիւ Սարգիս քա-
հանայի Շիրոյեանց հարազատի Հայաստանեայց ս. ե-
կեղեցւոյ.

Յանցեալ 1895 ամի տեսանելով իմ գտանիս ե-
կեղեցւոյ Հայոց Նորաշէնի Տփլիսեաց, ծածկեալն կըղ-

մինարօք, որք ի հնութենէ ժամանակին խախտեալք,
և բէկբէկեալք, անախորժ իմն տպաւորութիւն գոր-
ծէին յաչս տեսողաց և որ առաւել քնասակարն էր
չուրք անձրեաց ի ներքս տանեաց և որմոց նորին
Թափանցէին խոնաւութիւն և խախտումն պատճառե-
լով ի ժամանակին շինութեան եկեղեցւոյ, յորում պաշ-
տէք զբահանայութիւն Ձեր, ուստի ըստ բնատուր սի-
րոյդ առ պայծառութիւն եկեղեցւոյ ոչ խնայեցիր զջանս
առ ի գտանել և համոզել զբարեպաշտ անձինս ի նո-
րոգել գտանիս և զորմունս այնորիկ և բարեպաշտա-
կան իղձ քո ոչ էանց անօգուտ, զի յաջողեցաւ Ձեզ
գտանել և յորդորել զբարեպաշտ ժողովուրդս այնր ե-
կեղեցւոյ զպարոն Կարապետ և զԲէկլար Վարդանեան
եղբարս, որք սիրայօժար կամօք յանձն առին ծախուք
իւրեանց նորոգել գտանիս եկեղեցւոյ երկաթեայ թի-
թիղօք և ծեփել զորմունս նորին յար և պատշաճ կար-
գաւ որպէս վայելուչ է պայծառութեան Տանն Աս-
տուծոյ և յայտցիկ պէտս գործադրեալ են ոչ նուազ
քան բուբլիս երեք հազար, ուստի և ի արիտուր ա-
ռաքինական գործոց ըստ միջնորդութեան իմոյ Վե-
հափառ Հայրապետին շնորհեաց նոցա զհոնդակ օրհ-
նութեան. իսկ վասն վաստակաց Ձերոց և նախածեո-
նութեանդ ի նորոգութիւնն այն յայտնեմ զգոնունա-
կութիւն իմ և զքաջալերութիւն, մաղթելով յՍմե-
նակարողէն Աստուծոյ պարգևել Ձեզ զառաւել շնորհս
և զկարողութիւն յարատեւել յայսպիսի գործս Աստուա-
ծահաճոյս:

Թեմակալ առաջնորդ
ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊ. ՍՈՒՐԵՆԵԱՆ
№ 210
ի 15 մարտի 1897 ամի.
ի ք. Տփլիս

Այնուհետև հայր Շիրոյեանը եկեղեցին նորոգում է
իւր բոլոր մասերով, շինում է փառահեղ խաչկալ, որմե-
րը զարգարում նկարներով, պատկերները նորոգում և
ընտիր ջահեր գնում, որոնց ծախսը հոգում է մասամբ

բարեգործ անձանց առատ նուէրներով և մասամբ եկեղեցու միջոցներից:

Հայր Շիրոյեանը, իւր եկեղեցին պայծառացած տեսնելով, ազատ շունչ է քաշում, սակայն նրա եռանդոտ հոգին հանգիստ չէր առնում: Նա իսկոյն իւր ուշադրութիւնը գարձնում է դէպի ծխական դպրոցը և մանկական դաստիարակութեան գործը: Նա լաւ է ըմբռնում, որ ազգին կուշտուրապէս բարձրացնելու գլխաւոր պայմանը զբարոյն է, ուստի ցանկանալով իւր եկեղեցու համայնքի դպրոցական գործը տեսնել բարեկարգ վիճակի մէջ, նա անդուլ աշխատանքով կարողանում է ոչ միայն ապահովեցնել այդ դպրոցի նիւթականը, այլ և այդ դպրոցը հասցնում է փայլուն վիճակի: Սակայն դպրոցական գործունէութեան մասին կը խօսուի յետագայում:

Հայր Շիրոյեանը կատարում է իւր վրայ դրուած քահանայական պարտականութիւնները սրբութեամբ, հոգևոր կոչման մէջ մտնելուց ի վեր իւր համեստ, բարեբարոյ բնաւորութեան պատճառով սիրելի է դառնում թէ իւր իշխանաւորներին և թէ ժողովրդին, ի տրիտուր որոյ նա ստանում է հոգևոր իշխանութիւնից զանազան պարգևատրութիւններ իւր վարած այլ և այլ պաշտօնների համար, իսկ իւր ժողովուրդը սրտանց համակրում և յարգում է նրան:

Ինչպէս ժողովրդի իսկական հայր՝ նա մտնում է իւր ծխերի մէջ, յուսահատուածներին ոգի և շունչ ներշնչում, իսկ չունևոր և տնանկ ժողովրդականներին օգնում նիւթապէս երբեմն իւր սեփականութիւնից և երբեմն ունեւորներից ժողովարարութիւն անելով:

Նրա գործունեայ, անշահասէր բնաւորութիւնն ի նկատի ունենալով՝ թէ հոգևոր իշխանութիւնը և թէ ազգային զանազան հիմնարկութիւնները նրան յանձնում են շատ պատասխանատու պաշտօններ, որոնց նա գլուխ է

բերում փայլուն կերպով և արժանանում նրանց լիաբերան շնորհակալութիւններին: Այսպէս զեռ նրա ձեռնադրութիւնից մի տարի անց, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը յանձնում է նրան կրթանիսի Միրանաւոր ուխտատեղին և կարգում նրան վանահայր: Վանքը զրտնում էր աւերակ և տնտեսապէս քայքայուած վիճակի մէջ: Հայր Շիրոյեանը առանձին թափով նուիրում է վանքի նիւթական և բարոյական վիճակը բարձրացնելու և գտնում է բարեբարներ, ինչպիսին է Յովսէփ Իգիթեանը և ուրիշները, որոնք վերանորոգում են Վանքի տասից աւելի սենեակները, իսկ ապա ձեռնամուխ է լինում ուխտատեղու խախուտ և աւերակ վերանորոգութեան: Հիմնովին նորոգում է և պայծառացնում եկեղեցին դրսից և ներսից, սւաղում է ներսից եկեղեցու որմերը, տախտակում առաստաղը, ծածկում տանիքը թիթեղով, քարէ աստիճաններ շինում, վանքի գաւիթը շրջապատում պարիսպով և շինում եկեղեցու մուտքի գլխին նոր զանգակատուն:

Այդ նորոգութիւնների դրամական միջոցները նա ձեռք է բերում նուիրարբերութիւններով, այսպէս՝ Մկրտիչ Գրիգորեանը տէր-հօր յորդորմամբ նուիրեց 2500 բուրլի, նոյնպէս և ուրիշները:

Վանքին կից գտնւում էր մի պարտէզ, որի գետինը արքունական էր. այդ տեղը ցանկանում էր գնել հարեւան այգետէրը: Հայր Շիրոյեանը իմանալով այդ՝ անմիջապէս իր սեփական միջոցներով գնում է արքունիքից պարտէզի տեղը և ապա նուիրում վանքին:

Որպէսզի վերոյիշեալները լոկ գովեստներ չկարծուին այստեղ մէջ ենք բերում Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան տուած վկայականը 28-ից մարտի 1897 թ. № 353, աւելացնելով թէ նախ քան այդ, նոյն հոգաբարձութիւնը երկու զրութեամբ 25 յունիւ, 1896 թ. № 49 և

9 մայիսի նոյն թուի № 393, նոյնպէս առանձին շնորհակալութիւն է յայտնել նրա արիաջան և հաւատարիմ ծառայութեան համար: Ահա թէ ինչ է զրուած այդ վկայականի մէջ.—

Հոգաբարձութիւնը Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի, համաձայն օրագրի իւր 26-ն ամսոյս № 13, հիմնուած վանահօր Միրանաւորի ս. Աստուածածնի ուխտատեղի բարեկրօն Սարգիս քահանայ Շիրոյեանցի, 22-ից սոյն մարտի № 4 յայտարարութեան վերայ, տալիս է այս վկայականը Սարգիս քահանայ Շիրոյեանին առ այն թէ, նա ըստ առանձին միջամտութեան Հոգաբարձութեանս բարձր Սրբազան Առաջնորդի վիճակին Հայոց Վրաստանի և Իմերէթի առաջ,—մարտածսից 1895 ամի, ստանձնելով պաշտօն վանահայրութեան ուխտատեղւոյն Միրանաւորի ս. Աստուածածնի, իւր արիաջան, սրտեռանդ և օգտուէտ գործունէութեամբ վայելում է Հոգաբարձութեան գոհունակութիւնը: Տէր-Սարգիս հայրն ամենայն ջանիւք նուիրուելով իւր պաշտօնին և խիստ պաշտպանելով Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի նիւթական շահերը, յընթացս իւր ծառայութեան Միրանաւորի ուխտատեղում, խոհեմ, համեստ և արժանավայել վարմունքով զրաւել է ուխտատեղաց ջերմեհոտութիւնը և կրկնակի ու կրկնակի աւելացրել է ուխտատեղւոյ արդիւնքը: Տէր-Սարգիս քահանան, լինելով արի իւր պաշտօնում և միշտ ձգտելով աւելացնել ուխտատեղւոյ արդիւնքը յօգուտ զըպրօցիս միանգամայն արժանացել է առանձին ուշադրութեան Հոգաբարձութեանս իբրև գործունեայ և գուցէ անփոխարինելի վանահայր Միրանաւորի: Առ որ ստորագրութեամբ և զրոյժամբ կնքոյ վաւերացնէ: Ի 28 մարտի 1897 ամի, Ի ք. Տփլիս:

Հերթակալ հոգաբարձու Ն. ՏԻԳՐԱՆԵԱՆ
Գործավար Ռ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԵԱՆ
№ 353
Կ Ն Ի Ք

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը ոչ միայն այդ շնորհակալութեան վկայականն է տալիս, այլ զիմոււմ է նորին Վեհափառութեանը Խրիմեան Հայրիկին վարձատրելու նրան, որի հիման վրայ Հայրիկը վարձատրում է նրան հետեւեալ կոնդակով, տալով նրան լանջախաչ:

Բարեկրօն Սարգիս քահանայի Շիրոյեան միաբանի ս. Աստուածածին Նորաչէն եկեղեցւոյ Տփլիսաց նուիրեմք ողջոյն հանդերձ օրհնութեամբ:

Գատուարժան Հոգաբարձութիւն Ներսիսեան. Հոգևոր Դպրանոցի Տփլիսաց գրութեամբ իւրով առաջի արարեալ Մեզ զանշահասէր ջանս քո և վաստակս յօգուտ նոյն դպրանոցին խնդրէ վարձադրեալ տեսանել զքեզ:

Որ սիրող եմք ընդ բարի յատկութիւնս պաշտօնէից Մերոց և խնդամք ընդ անշահասէր բարս նոցին, տեսեալ զայդ վաստակ քո Մեք սովին Հայրապետական կոնդակաւ շնորհեմք քեզ իբրևունս կրել ի կուրծսդ զլանջախաչ քահանայական ոսկեզօծ առանց ձուլեալ պատկերի Փրկչին, զի վարձատրութեամբս այսու ևս առաւել արիացեալ զհետ լիցես փառաց և շահուց ս. եկեղեցւոյս Հայաստանեայց:

Մաղթեմք ի Տեսանէ լինել քեզ զօրավիզ ընդ ամենայն աւուրս կենաց քոց:

Ողջ լեր զօրացեալդ ի Տէր: Ամէն:
յՅ0 յունուարի 1898 ամի
և ըստ տոմարիս ՌՁԽԷ ՄԿՐՏԻՉ ԿԱՓ.
Ի Հայրապետութեան Մերում Ե. ամի ԱՄ. ՀԱՅՈՑ
Ի ք. Տփլիս.
Թ. 151

Իսկ հետեւեալ կոնդակով տալիս է նրան իբրևունք կամիլաւկայի.—

Միաբանի ս. Աստուածածին եկեղեցւոյ Նորաչէնի Տփլիսաց բարեկրօն Սարգիս քահանայի Շիրոյեան հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս ողջոյն և օրհնութիւնս Ի հաւաստիս գոհունակութեան մերոյ առ հաւատարիմ պաշտօնեայդ ս. եկեղեցւոյ, որով գոհ կացու-

ցեալ ես գտերձաւորն քո հողերը իշխանութիւն, ար-
ժանացեալ գովեստից թեմակալին վիճակիդ գեր. տ.
Գէորգ արքեպիսկոպոսի և ի խրախոյս Քեզ առաւելա-
գոյն ևս յետ այսորիկ արիանալոյ ի պաշտամանդ,
Մեք արժան համարիմք սովին Հայրապետական կոն-
դակաւ շնորհել Քեզ իրաւունս կրել ի գլուխդ
զթաւշեայ գլխարկ կամիլաւկայ անուանեալ, սակայն
գործ ածել միայն արտաքոյ եկեղեցւոյ և ոչ այնչափ
բարձր գոր կրեալ են ցարդ:

Աղայեմք զԱստուած կարողացուցանել զՔեզ ի
պաշտամանդ ի փառս ս. եկեղեցւոյ և յուրախութիւն
հօտիդ:

Ողջ լեր և օրհնեալ յԱստուծոյ և ի Մէնջ: Ամէն:
Ի 26 հոկտեմբերի 1898 ամի

և ըստ տոմարիս ՌՅԽԸ ՄԿՐՏԻՉ ԿԱՔ.

և ի Հայրապետութեան մերում Զամի ԱՄ. ՀԱՅՈՑ

յԱրարատեան Մայր-Աթոռն Ս. Էջմիածնի

ի Վաղարշապատ

№ 1227

Հայր Շիրոյեանը ոչ միայն կրծանիսի Ծիրանաւոր
ուխտատեղին նորոգեց ու պայծառացրեց այլ և միւս
ուխտատեղիներն ևս աչքաթող չարաւ, այլ իւր սովուն
ջանասիրութեամբ, հնար եղածին չափ, պայծառացրեց
ու շէնացրեց: Այսպէս Շաւնաբաթի եկեղեցու և սենեակ-
ների տանիքը նորոգեց, շինեց գաւթում ցեմենտեայ մեծ
ջրամբար, գաւթը ընդարձակեց ամբարգակներով և այլ
նորոգութիւններով. ծախսի մի մասը հոգաց Լ. Փրիդո-
նեանի և Յ. Դանդուբեանի նուէրներով: Նոյնպէս նրան
յանձնուեց նորոգելու և կարգի ձգելու Շվինդիսի ուխ-
տատեղին, որը տեղւոյն վանահօր անուշաղբութեան պատ-
ճառով կատարեալ աւերակ էր դարձել իսկ ուխտատեղի-
ներին յատկացրած սենեակները քարուքանդ եղել: Տա-
րիներ շարունակ ուխտաւորների արգար բողոքը մնում
էր առանց բաւարարելու և ուխտաւորները, ուխտագնա-

ցութեան օրերին, մեծ երկիւղով էին սենեակներ մըա-
նում, վախենալով քանդուելուց: Հայր Շիրոյեանը, թե-
միս սրբազան Առաջնորդի յանձնարարութիւնը ամենա-
կարճ ժամանակում գլուխ բերեց և Արշակ Նազարեա-
նի և այլոց զրամական նուէրներով նորոգեց ոչ միայն ե-
կեղեցու տանիքը, այլ և ուխտատեղու սենեակները:

Յայտնի է, որ Քիֆիսի թեմում գլխաւորապէս եր-
կու մեծ ուխտատեղիներ կան, ուր տօնախմբութեան օ-
րերին կովկասի զանազան վայրերից մեծ բազմութիւն է
ժողովում և իրենց կրօնական ուխտը կատարելով հան-
դերձ, նիւթական մեծ նուէրներ տալիս: Այդ ուխտատե-
ղիներն են՝ Թէլէթը և Բոլնիս-Պաչէնը, ուր ուխտաւոր-
ների ստուար բազմութիւն ժողովուելով, մորթում են
բազմաթիւ ոչխարներ, երինջներ, գառներ: Չենուող կեն-
դանիների մորթիները ամբողջովին մնում են յօգուտ ե-
կեղեցու, որոնց վաճառումից ուխտատեղին ստանում է
մի խոշոր գումար, չհաշուած գանձանակը, մոմի արդիւն-
քը և այլն: Այդ ուխտատեղիներում մեծ բազմութիւն
ժողովուելով կարևոր էր և ուխտատեղիների յարմարու-
թեան համար մտածել, սակայն Բոլնիս ուխտատեղին
գուրկ էր մի ամենաանհրաժեշտ յարմարութիւնից, այն է
գուրկ էր ջրից, որի կարիքը խիստ զգալի էր, քանի որ
ուխտաւորների համար շուրջ բերում էր հեռուից: Ճւ-
անա հայր Շիրոյեանի մտքում ծնունդ է առնում այդ
պակասը լրացնելու և ուխտատեղու գաւթում շուրջ բե-
րելու: Իւր բնածին ընդունակութեամբ նա գտնում է և
զրա հնարը՝ նա զիմում է Գէորգ Բախշինեանին և բացա-
տրելով իւր միտքը այլ և նրա բարեպաշտական զգաց-
մունքները քաջալերելով, առաջարկում Բոլնիս ուխտա-
տեղու գաւթում շուրջ բերել տալու ծախսը իւր վրայ առ-
նել: Գէորգ Բախշինեանը ոչ թէ զժկամակութիւն չէ ցոյց
տալիս աէր հօր առաջարկութեանը, այլ սիրով յանձնա-

2815-58
 21829
 157-10157



առև է լինում կատարելու այդ իւր սեփական ծախսով և գրաւոր խոստումն է տալիս ծախսելու դորա համար 5000 ռուբլի, որի մասին հոգևոր իշխանութիւնը կարգադրութիւն է արել: Վերոյիշեալ ուխտատեղու առթիւ Թիֆլիսի կոնսիստորիան հրամանով 26 դեկտեմբերի 1901 թ. № 5613 շնորհակալութիւն է յայտնում հայր Շիրոյեանին նրա հաւատարիմ և արիաշան ծառայութեան համար:

Հայր Շիրոյեանը, որպէս պաշտօնական մի անձն, նոյնպէս կատարել է և կատարում է շատ պատասխանատու պաշտօններ, որպիսիները նա կատարել է ամենայն բարեխղճութեամբ և հոգևոր իշխանութիւնն էլ ի տրիտուր նրա հաւատարիմ գործունէութեան, ոչ թէ միայն չէ առել նրանից այդ պաշտօնները, այլ և՛ հետզհետէ, աւելի ու աւելի պատասխանատու պաշտօններ յանձնել և վարձատրել շնորհակալութեամբ և պարգևներ տալով:

Իւր ձեռնադրութեան հետևեալ տարին, այն է 24 ին մայիսի 1895 թ, № 1697 գրութեամբ նա նշանակուում է հոգևորականների Որբ և Այրիների հոգաբարձութեան անդամ, որպիսի պաշտօնը վարում է 24 երկար ու ձիգ տարիներ մինչև օրս, առանց վարձատրութեան: Ոչ մի տարուանջ, ոչ մի դժկամակութիւն չէ ցոյց տալիս նա այդ անվարձ պաշտօնը այդքան երկար ժամանակի ընթացքում կատարելու համար, թէև դա ահագին ժամանակ էր խլում և այրիներին ու որբերին զբաղ բաշխելը մեծ հրմտութիւն և հոգածութիւն պատճառում, այլ ընդհակառակն աշխատում էր նրանց արդիւնքը բեղմնաւորել, որպէսզի որբերը հնար ունենան սպորուստի շօշափելի գումար ստանալու: Այնուհետև նա առանց յոգնելու ստանձնում է և այլ պաշտօններ: 1911 թուին նա նշանակուում է Թիֆլիս բաղաքի և կից գիւղօրայքի եկեղեցիների գործակալ, իսկ 1912 թուին վիճակային կոնսիստորիայի անդամ: Այս պաշտօններում ևս նա ցոյց է տալիս առան-

ձին եռանդ և հմտութիւն, շարունակ հետեւելով գիւղական եկեղեցիների և դպրոցների բարեղարդութեան, իսկ կոնսիստորիայի գործերի արագ ընթացք տալու համար նա եղել է մի անողոր խթան:

Մայիսի 22-ից 1900 թուի մինչև 7 յունիսի 1906թ. նա կատարել է կոնսիստորիայի գանձապահի ծանր և պատասխանատու պաշտօնը. առանց վարձատրութեան և այն էլ այն շրջանում, երբ 1905 թուի յեղափոխական շարժման ժամանակ զբաղի համար մարդկային կեանքը մազից էր կախուած և շատ կեանքեր զոհ էին գնում փողի համար: Հայր Շիրոյեանը կոնսիստորիայի կանխիկ զբաղմը, տոկոսաբեր թղթերը և այլ թանկարժէք իրերը իւր սեփականութիւնից բարձր համարելով՝ մեծ հմտութեամբ և խոհեմութեամբ պահպանեց և չնայած իւր անձի գէժ սպառնալիքներին, անկորուստ յանձնեց ամբողջ գանձը հոգևոր իշխանութեանը:

Այստեղ չենք ուզում խօսել շարաքաստիկ այն տարւայ մասին, երբ հայոց եկեղեցական կալուածները գերաւուելով ցարի իշխանութեան կողմից, թաթը դրել էին նաև կոնսիստորիայի գանձի վրայ և ամենքը, երկիւղը սրտերում, չէին անցնում մինչև իսկ կոնսիստորիայի կողմը, սակայն հայր Շիրոյեանը հասկանալով իւր գանձապահութեան ծանր պարտաւորութիւնը, անձնական երկիւղը մի կողմը զբաղ, ամեն հաւատարմութեամբ ի մի ժողովեց կոնսիստորիայի գանձը: Այդ ժամանակ էջմիածնի վանքը և Ճեմարանը, կալուածների գրաւման պատճառով, տնտեսական ձգնաժամի մէջ էին: Նա մի քանի անգամ գնաց էջմիածին և ժողոված զբառները յանձնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Խրիմեան Հայրիկին. գանձարանում թողնելով միմիայն օտարապատկան անուանական տոմսերը: Կառավարութեան կողմից արած ոչ ըսպառնալիքը, ոչ յորդորները և ոչ խոստումները ազդեցու-

Թիւն չունեցան հայր Շիրոյեանի վրայ և նա հասկանալով ու ըմբռնելով իւր պարտականութեան սու իրաւանց սահմանները սրբութեամ պահպանեց այդ գանձը: Եւ Վեհ. Հայրապետ Խրիմեան Հայրիկը գնահատեց նրա արածը: Նա յայտնեց իւր շնորհակալութիւնը իւր հաւատարիմ պաշտօնեային: Նա վարձատրեց նրան նիւթապէս և ազա նրա հովուական արի ծառայութեան համար շնորհեց նրբան աւագ քահանայութեան պատիւ հետեւեալ կոնդակով,

Արժանապատիւ Տ. Սարգիս քահանայի Շիրոյեան միաբանի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հայոց Նորաջինու Տփխեաց՝ հարազատի մայր Աթոռոյ Հայրապետական ողջոյն և օրհնութիւն:

Ձեռն զանխուլ ի Մէնջ բազմամեայ հաւատարիմ և ուշիմ ծառայութիւնք Ձեր ի Տաճարի Տեառն և հովուական գործունէութիւնք ի Ձեզ հաւատացեալ Ժողովրդեանդ զորոյ ուշադրութիւնն գրաւեալ էք, ոյր վասն կամ եղև Մեզ ի վարձատրութեան և ի քաջալերման զձեզ տեսանել:

Արդ այսու Հալրապետական կոնդակաւ մերով շնորհեմք Ձեզ զպատիւ Աւագ քահանայութեան, և յուսամք լիապէս, զի այսու քաջալերեալ նոյնպէս ընդմիշտ ի նոյն ուղղութիւնս գործունէութեան ունիք յարատև վարել զպաշտօն Ձեր յօգուտ Ձեզ յանձն եղեալ հօտին:

Ողջ լիւրուք զօրացեալ և պահպանեալ ընդ աջով Նախախնամող Տեառն և օրհնեալ ի Մէնջ: Ամէն:

Ի 5 յունվարի 1907 ամի

Եւ ըստ տոմարիս ՌՅԾԶ ՄԿՐՏԻԶ ԿԱԹ.

ի Հայրապետութեան մերում ԺԴ. ամի ԱՄ. ՀԱՅՈՑ

յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ի Վաղարշապատ

Թ. 24

Սակայն որպէսզի ամփոփենք հայր Շիրոյեանի քահանայական օգտակար գործունէութիւնը, այստեղ պէտք է աւելացնենք, որ նա, իւր ծառայութեան ամբողջ ըն-

թացքում, գոհացրել է ոչ միայն իւր ծխերին ու ժողովրդեան, այլ և բոլոր առաջնորդներին, որոնք կառավարել են Թիֆլիսի թեմը:

Ահա թէ ինչ է ասում Թիֆլիսի թեմի առաջնորդ գերապատիւ Տէր-Մեսրոպ եպիսկոպոսը, իւր՝ հայր Շիրոյեանին ուղղած գրութեան մէջ:

Վրաստանի Կոնսիստորիայի անգամ, Թիֆլիսի Ա. Մ. գործակալ՝ բարեկրօն Սարգիս ա. ք. Շիրոյեանին:

Ուղիղ երեք տարի ու կէս կառավարեցի Թիֆլիսի թեմը, Ձեզ գտայ իմ նախորդի օրով նշանակւած անգամ Կոնսիստորիայի և գործակալ՝ քաղաքի առաջին մասին: Իբրև անգամ Կոնսիստորիայի, իմ պաշտօնավարութեան ժամանակ կատարում էիք Ձեր ձրի և կամաւոր աշխատանքը բարեխղճութեամբ և ջանասիրութեամբ, ամենայն կանոնաւորութեամբ յաճախելով բոլոր նիստերին, իսկ ոչ-ատենական օրերում գալիս ընթացք էիք տալիս կարևոր թղթերին և խնդրատուններին: Կատարել էք Կոնսիստորիայի բազմաթիւ յանձնարարութիւնները, ամուսնալուծական, չափաբերական և այլ քննութիւններ կատարելով, միշտ մտածել էք և առաջարկել էք միջոցներ աւելացնելու Կոնսիստորիայի եկամուտները և հետամտել կորուստներին: Իբրև գործակալ, կատարելով քո յանձնարարութիւնները, հետամուտ էք եղել քաղաքի եկեղեցիների կարգապահութեան, հաշիւների ստուգութեան ու ջանք գործադրել շրջակայ ուխտատեղիների արդեանց կանոնաւոր զանձման վրայ:

Սակայն անկախ այս բոլորից՝ Դուք կատարել և կատարում էք մի գործ, որով Ձեզ համար անմոռանալի յիշատակ էք թողնում և որով Դուք ցոյց էք տւել Ձեր ազգասիրութիւնն ու եկեղեցասիրութիւնը: Ձեր ջանքերով Նորաշէն եկեղեցու դպրոցը նիւթապէս ապահովւած և ծաղկման ճանապարհի վրայ էք դրել: Նպաստել էք բանալու քաղաքի շրջակայ վրացախօս և օտարացման մօտեցած Ներքին և Վերի Թէլէթի-

րում, Կումիս, Կողա, Վաշլեան, Մուխաթ, Շվինդիս, Տարախմելա և այլն հայ գիւղերում դպրոցներ, ուր հայ երեխաները կրթւելով կը սովորեն իրենց Մայրենի լեզուն և Կրօնը:

Ձեր այդ ծառայութիւնները առանձնապէս գնահատելով, այս իմ գրութեամբ կամենում եմ խոստովանել այդ ի խրախոյս Ձեր աշխատանքի և հաւատացած եմ, որ այսուհետև ևս շարունակելու էք նոյն եռանդով այդ գեղեցիկ ծրագրով առաջ ընթանալ: Բարեմաղթում եմ, որ Ամենակարողն Աստուած հեռացնէ ամեն տեսակ արգելքներ և չարերը չխանգարեն Ձեզ ի կատար ածելու այդքան գեղեցիկ աշխատանքը:

Ցաւելով հեռանալով Ձեզնից, յայտնում եմ իմ շնորհակալութիւնը և երախտագիտութիւնն և ուրախութեամբ խոստովանում Ձեր կատարած ծառայութիւնները, որով թեթեւցրիք իմ աշխատանքը Թիֆլիսի լայնածաւալ և պատասխանատու թեմի կառավարութեան գործում:

Առաջնորդ թեմի՝ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ
№ 776

31 օգոստ. 1916 ամի
Ի ք. Տիֆլիս

Բացի այդ Մեսրոպ եպիսկոպոսը չբաւականանալով դրանով, անձամբ յայտնում է Նորին Վեհափառութեան և զըւատում է հայր Շիրոյեանի օգտաւէտ գործունէութիւնը և աշխատանքը:

1917 թուին խորտակուելով հին կարգերը և առաջ գալով նոր գեմոկրատիկ կարգեր, որոնց հիման վրայ բոլոր պաշտօնեաները պէտք է ընտրուէին, հայր Շիրոյեանը հրաժարւում է իր պաշտօններից՝ յարգելով ընտրողական սկզբունքը: Բայց ներկայ առաջնորդ գեր. Մխիթար եպիսկոպոսը մերժելով նրա հրաժարականը, գրում է.—

Արժանապատիւ Տ. Ս. ա. ք. Շիրոյեանին
Ի նկատի ունենալով Ձեր բազմամեայ անբասիր ծառայութիւնը հոգաբարձական և գործակալական

պաշտօններում, մերժում եմ ընդունել Ձեր հրաժարականը և յորդորում եմ ըստ առաջնոյն շարունակել Ձեր օգտակար ծառայութիւնը ս. Եկեղեցու և Դպրոցի համար, որովհետև, համոզւած եմ, որ Ձեր գործունէութեան գրգապատճառը չէ եղել որևէ վարձատրութեան կամ գնահատութեան ակնկալութիւն, այլ միմիայն գործի սէրը և նրանից ստացած բարոյական հաճոյքը:
Թեմակալ Առաջնորդ՝ ՄԽԻԹԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Գ.

Ինչպէս եկեղեցին, այնպէս էլ դպրոցական, կրթական գործը շատ մօտ է եղել հայր Շիրոյեանի սրտին ու հոգուն: Նրա աշխատանքը՝ եկեղեցիների պայծառութեան և դպրոցների ծաղկեցման գործում, միշտ խրախուսուել է Վրաստանի թեմի առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոսի (արդի Կաթողիկոսի) կողմից: Նա է եղել, որ իւր հայրական յորդորներով միշտ վառ է պահել հայր Շիրոյեանի մէջ անդադրում գործունէութեան վառ հոգին ու սէրը: Նոյնպէս և Մեսրոպ եպիսկոպոսը միշտ սրա դպրոցասէր և եկեղեցասէր շինարար աշխատանքը խրախուսել, եռանդ և աշխոյշ ներշնչել և ամեն կերպ աջակցութիւն ցոյց տուել նրան:

Իւր եկեղեցին պայծառացնելու ժամանակ հայր Շիրոյեանի մտահոգութեան գլխաւոր առարկաներից մէկն էլ կազմել է մանուկ սերնդի կրթական գործը: Նա տեսնում է իւր ծխական դպրոցի անմխիթար դրութիւնը, և ահա նա ձեռնարկում է այդ դպրոցը իւր բարձրութեան վրայ կանգնեցնելու:

Նորաշէնի ս. Մարիամեան օր. դպրոցը, վերաբացւելով՝ 1905 թուին, տարեկան արդիւնք ունէր ընդամենը 142 ու 50 կ. և աշակերտական թուակներ: Դպրոցի այդօրինակ անապահով վիճակի պատճառով, թեմի առաջ-

նորդի կարգադրութեամբ և ծխական ժողովի համաձայնութեամբ, որոշուած էր փակել երկու բաժանմունքը և բաւականանալ միայն մի բաժանմունքով: Հայր Շիոյեանը զգում և հասկանում է, որ մի բաժանմունքը ոչ մի արդիւնք չի տալու և պատիւ չէ իւր եկեղեցուն և համայնքին ունենալ մի այդպիսի դպրոց. ահա, չնայած ժամանակի աննպաստ հանգամանքներին, նա բուն դիմադրութիւն է ցոյց տալիս բաժանմունքները փակելուն և խոստանում է ապահովել նրա նիւթականը: Նա փայլուն կերպով կատարում է իւր խոստումը աջակցութեամբ ծխական հոգաբարձութեան:

Թիւրք-Հայկական ընդհարումը դեռ նոր էր վերջացել և հայի կեանքը դեռ մեծ վտանգի մէջ էր: Հայր Շիոյեանը հոգաբարձութեան լիազօրութիւնն առնելով՝ շտապում է Գանձակ, որ այնտեղ կարգի բերի անուշադրութեան և անյայտութեան մատնուած Կուղանեանից Նորաշէն եղեղեցուն նուիրարեւած քարվանսարայի գործերն ու հաշիւները: Այդ քարվանսարայի $\frac{1}{4}$ մասը պատկանում էր Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցուն, բայց տեղական հոգաբարձութիւնը, երկիւղից, չէր կարողանում ստանալ քարվանսարայի վարձն և հաշիւները: Հայր Շիոյեանին յաջողում է թիւրք կապալաուուից ստանալ հաշիւները և նրանից ստացած գրամի մի մասը գործադրելով նոյն կալուածքի նորոգութեան վրայ, մնացորդ գումարը 611 ո. 17 կ. բերում յանձնում է Նորաշէնի հոգաբարձութեանը: Այդ կալուածքը, նորոգութեան շնորհիւ, այնուհետև տարեկան արդիւնք էր տալիս 600 ո., որպիսին գործադրում էր դպրոցի պահպանութեան համար:

Այնուհետև, դպրոցի եկամուտը աւելացնելու նպատակով հայր Շիոյեանի ջանքերով ծխական ժողով է հրաւիրում և չորս տարի շարունակ ծխական տուրք հան-

գանակում յօդուտ դպրոցի, որից գոյանում է մի պատկանելի գումար, այն է 3673 ո. 22 կ.: Սակայն հայր Շիոյեանը նկատելով, որ ծխական տուրքը չի կարելի մշտական աղբիւր համարել դպրոցի համար և որ դպրոցի երեք բաժանմունքով կրթական գործը չէ լրանում, այլ մնում է թերի՝ աշխատում է ձեռք բերել հաստատուն աղբիւրներ, որոնք ապահովէին չորս բաժանմունքով դպրոցի պահպանութիւնը:

Հանգուցեալ քաղաքացի Իգմիրեանը իւր կալուածքը, որ գտնւում է Թիֆլիսում, Վիննի փողոցի վերայ, նուիրել էր Նորաշէն եկեղեցուն, դպրոցի պահպանութեան համար: Կտակի զօրութեամբ այդ կալուածքը անցել էր Ներսիսեան դպրոցին հայոց դպրոցները մարմնաւոր իշխանութեան ձեռքն անցնելու ժամանակ: Սակայն կալուածքը խարխուլ լինելու պատճառով՝ Ներսիսեան դպրոցը քանդեց և մնաց դատարկ գետին: Հայր Շիոյեանը յաջողեցրեց յետ ստանալ այդ գետինը Ներսիսեան դպրոցից և յանձնել Նորաշէնի հոգաբարձութեանը, ապա ծխական ժողով հրաւիրեց և առաջարկեց այդ դատարկ գետնի վրայ շինութիւն կառուցանել, որպէսզի դա մշտական եկամտի աղբիւր դառնայ դպրոցի համար: Հայր Շիոյեանը, ոգևորուած գործի մեծութեամբ, ձեռք ձեռքի տուած ծխական հոգաբարձութեան հետ, դիմեց հանգանակութեան և ժողովեց այդ նպատակի համար 2000 ո. սակայն այդ բաւական չէր շինութեան ծախսերը ծածկելու համար և ահա հայր Շիոյեանի մի նախաձեռնութիւն գալիս է օգնութեան գլուխ բերելու շինութեան գործը:

Հայր Շիոյեանը կամենալով օգտագործել բարերար Աղէքսանդր Մանթաշեանի առատաձեռնութիւնը վրացերէն մի նամակով դիմում է նրա կնոջը՝ Գարիա Մանթաշեանին, որ գտնւում էր արատասահմանում և խնդրում է նրան, որ միջնորդէ իւր ամուսնուն՝ պ. Աղէքսանդրին,

որ իւր առատ նուէրներէց մաս հանէ նաև Նորաշէն եկեղեցուն: Դա դառնում է պատճառ, որ հանգուցեալ տիկինը մի նամակով յայտնում է իւր ամուսնուն՝ որ Բորժումի ամարանոցը նուիրում է իւր մահից յետոյ Նորաշէն եկեղեցուն: Հայր Շիրոյեանի այդ նամակը Աղէքսանդրի ձեռքն անցնելուց յետոյ, դիմում է Սաթուհեանին և յայտնում իւր անբաւականութիւնը: Ապա Մանթաշեանը պատահելով հ. Շիրոյեանին, յայտնում է որ մի կերպ կրաւարաբէ նրան: Վերջապէս Շիրոյեանը պ. Լևոն Եւանգուլեանի աջակցութեամբ, մի հնարով աջողեցնում է ստանալ պ. Աղէքսանդր Մանթաշեանից այդ նուէրի փոխարէն 5000 ո. յօգուտ եկեղեցու: Ստացուելով այդ գրամը Իգմիրեանցի կալուածքի շինութիւնը շուտով աւարտում է և ասրեկան 1000 ո. արդիւնք է բերում:

Դպրոցի պահպանութեան համար մշտական աղբիւրներ գտնելուց յետոյ նա հանգիստ չէ մնում: Տեսնում է դպրոցական շինութեան խղճուկ վիճակը և ահա ձեռք դարկում նորոգութեան: Նորից ժողովարարութեան է դիմում և նորոգում դպրոցական շէնքը ծախսելով մօտ 3000 ո.: Սակայն դպրոցի նիւթականի ապահովութիւնը դեռ թերի էր:

Նորաշէն եկեղեցու ծուխերից մէկը՝ պ. Կարապետ Վարդանեանը, իւր տկարութեան ժամանակ, կանչում է հայր Շիրոյեանին և խնդրում, որ իր թաղման կարգադրութիւնը իւր վրայ վերցնի: Հայր Շիրոյեանը իմանալով որ նա գրաւոր կտակ ունի կազմած, ծանօթանում է կրտակի հետ և տեսնում է որ խոշոր գումարներ են կտակաւ զանազան հիմնարկութիւններին, իսկ Նորաշէն եկեղեցին մոռացուած, առաջարկում է անպայման մասն հանել նաև Նորաշէն եկեղեցուն, որպիսի գումարով գնուի մի կալուածք դպրոցի պահպանութեան համար: Կարապետ Վարդանեանը կատարում է հայր Շիրոյեանի առաջարկը և

որդոցը կանչելով՝ պատուիրում է տալ Նորաշէն եկեղեցուն 12,000 ո., որի համար հայր Շիրոյեանին տալ պարտաւորագիր որ այդ գումարով գնուի մի կալուածք և արդիւնքի մի մասը յատկացնուի դպրոցին: Այդ կալուածքը գնում է, որից զուտ արդիւնք է մնում ասրեկան այժմս մօտ 3,000 ո.: Բայց հայր Շիրոյեանի գործ դրած ջանքերի մասին թող խօսին փաստերը: Ահա թէ ինչ է վկայում Նորաշէնի դպրոցի հոգաբարձութիւնը՝ որի անդամներն էին՝ Ա. Քիչմիշեան, Լ. Եւանգուլեան, Ա. Շամշինեան և Գ. Թամամշեան:

Արժանապատիւ հայր Սարգիս ա. ք. Շիրոյեան:

Այն օրից, երբ վերաբացուեցան հայոց եկեղեցական ծխական դպրոցները հովանաւորութեամբ Հոգեւոր Բարձր Իշխանութեան և ներկայ Հոգաբարձութիւնս կոչուեցաւ կառավարելու Նորաշէնի ս. Աստուածածնայ Մարիամեան օրիորդաց եկեղեցական-ծխական դպրոցը, Դուք, իբրև նոյն եկեղեցւոյ միաբան և դպրոցի կրօնագիտութեան ուսուցիչ, անձնուէք գործակից հանդիսացաք Հոգաբարձութեանս բոլոր ձեռնարկութեանց մէջ, կատարելով նրան վերաբերեալ պարտականութիւնները: Դուք էիք, յարգելի Հայր, որ Հոգաբարձութեանս յանձնարարութեամբ՝ թողնելով Ձեր սեպհական գործերը, գնացիք Գանձակ քաղաք դպրոցիս պատկանեալ Դուզանեանց քարվանսարայի կապալառուի հետ և նրան հասանելի կապալադրամի մասին դաշինք կապելու: Դուք էիք, որ եկեղեցւոյ ծխականների մէջ արծարծում էիք սէր դէպի դպրոցը և նրանք Ձեր յորդորներին ձայնակցելով առատ նուիրաբերութիւններ էին անում դպրոցիս յարատեւութեան համար: Այս և սորա նման Ձեր անձանձիբ և եռանդուն գործունէութեան պատճառով Հոգաբարձութիւնս իրան պարտական է համարում յայտնելու Ձեզ իր լիարեւան շնորհակալութիւնը, հաւատալով որ այսուհետեւ էլ Դուք, յարգելի Հայր, չէք զլանայ Ձեր մասնակցութիւնը Հոգաբարձութեանս ձեռնարկութեանց մէջ:

№ 24

30 մայիսի 1907 ամի.

Այնուհետև հարց է ծագում զպրոցական նոր շինութիւն կառուցանելու: Դպրոցի շէնքը թէև նորոգուած էր, սակայն զպրոցական սենեակների քշութիւնն անհրաժեշտ էին դարձնում ունենալ զպրոցական նոր շինութիւն իւր ամեն յարմարութիւններով: Այդ միտքը հանգստութիւն չէր տալիս հայր Շիրոյեանին: Նա մտածում է կազմել մի Փոնդ, որը տարիների ընթացքում, մի պատկառելի գումար դառնալով՝ հնարաւորութիւն տար կառուցանելու այդ շինութիւնը: Յարմար առիթը ինքն ըստ ինքեան առաջ է գալիս և հայր Շիրոյեանը օգտուելով զէպրից կազմում է այդ Փոնդը՝ իւր փայփայած նպատակին հասնելու համար: Վախճանուում է իւր ծուխ կատարինէ Փրիդոնեանը և նրա որդիքը նուիրաբերում են 3,000 ռ. Մի քանի ամսից յետոյ զիմում է նորա որդիներին և խնդրում, որ հանգուցեալի յիշատակին նուիրաբերուած 3,000 ռուբլին աւելացնեն և դարձնեն 6,000 ռ.: Եղբ. Փրիդոնեանները սիրով կատարում են տէր հօր խնդիրը և այդ գումարը յատկացնում է զպրոցական նոր շինութեան Փոնդին:

Նոր շինութեան փոնդի հիմնաքարը արդէն ձգուած էր, հարկաւոր էր այդ գումարը աճեցնել և ահա պ. Լևոն Եւանգուլեանը, որի սրտին շատ մօտ և նուիրական էր Նորաշէնի զպրոցը և իւր մշտական նուէրներով օգնում նրան, ընդ առաջ է գալիս հայր Շիրոյեանի ցանկութեան և նուիրում է 1,000 ռ.: Մի բարեպաշտ ծխական խոստում է, տալիս իւր սեփական զրամով զնել եկեղեցու շուրջը գտնուած մի քանի կալուածներ և նուիրել զպրոցական նոր շէնքի համար: Նա արդէն փնած ունի երկու կալուածք և ներկայ պատերազմի պատճառով միւս կալուածների գնումը մնում են: Գնելուց յետոյ մտադրութիւն ունի կտակով նուիրել եկեղեցուն:

Անշուշտ մեր կեանքի ծանր պայմաններում, երբ խոչնդոտները անպակաս են գործչի համար, դժուար է

միայնակ տանել գործի ծանրութիւնը եթէ նա չգնահատուի, չխրախուսուի և բարոյական աջակցութիւն չգտնի:

Այդ ժամանակ Նորաշէն զպրոցի գլուխ էին անցած վերը յիշուած յայտնի անձնաւորութիւններ պ. պ. Ադ. Իրշմիշեան, Լ. Եւանգուլեան, Ա. Շամշինեան և Գ. Քամաճեան, որոնք փնտրուում էին հայր Շիրոյեանի գործունէութիւնը: Շիրոյեանը ոգևորուած զրանցից, միշտ նոր եռանդով էր գործում իւր եկեղեցու և զպրոցի համար: Իբրև փաստ առաջ ենք բերում Թիֆլիսի Նորաշէն եկ. Մարիամեան օր. զպրոցի 1905/6 1908/9 թ. տպագրած քառամեայ հաշուից հետևեալ կտորը.

Առանձին շնորհակալութեան արժանի է Նորաշէն եկեղեցու միաբան արժ. Սարգիս աւ. քահ. Շիրոյեանցը, որ հոգաբարձական մարմնի կազմութեան օրից չի խնայում իր աշխատութիւնը յօգուտ զպրոցի որի մասին հոգաբարձութիւնս բազմիցս յայտարարել է ծխականներիդ և ծխական ժողովը 1909 թ. հոկտեմբերի 4-ին իր արձանագրութեան մէջ առանձնապէս շեշտեց արժանապատիւ հօր ջանասիրութիւնը և յօգուտ զպրոցի ծառայութիւնը, խնդրելով հոգաբարձութեանս նրան ըստ արժանոյն պարգևատրելու համար զիմել Նորին ս. Օծութեան ամենայն հայոց վեհափառ կաթողիկոսին՝ հրաւիրելով նորին վեհափառութեան ուշադրութիւնը այդ արիւնքան հոգևորականի վրայ:

Նորաշէնի զպրոցի վերաբերմամբ հայր Շիրոյեանի գործունէութիւնը դորանով չէ սահմանափակուում: Նա շատ անգամ տեսնում էր թէ ինչպէս իւր զպրոցի աշակերտ-աշակերտուհիները դժգոյն և դալուէկ զէմքով ու պատառոտուն ցնցոտիներով, ցուրտ սառնամանիքին զրպրոց էին յաճախում: Այս հանգամանքը միտք է ծագեցնում բանալու աշակերտական ճաշարան, և այդ միտքը նրան հանգստութիւն չէր տալիս: Մի զէպք շտապեցնում է ձրի ճաշարան բանալը:

1911 թ. սեպտեմբեր ամիսն էր: Աշակերտուհիների

մի մասը կայտառ թռչկոտում էր սրահում, երբ հայր Շիրոյեանը ներս է մտնում դասարան և նկատում է, որ մի աշակերտուհի, գունատ և դալկացած դէմքով, կուչ էր եկել և գլուխը դրել սեղանին: Նա մտածնում է նրան և և հարց ու փորձ է անում: Այդ ընկերին աշակերտուհին նուազած ընկնում է յատակի վրայ: Ընկերուհիները յայտնում են որ դա երկու օր է սոված է և թէ տանը մի պատառ հաց անգամ չունեն ուտելու, որովհետև մայր չունի և հայրն էլ անգործ և հիւանդ է: Հայր Շիրոյեանի աչքերում արցունքներ են երևում: Նա հասկանում է, որ քաղցած ստամոքսով կրթական գործը առաջ տանել չի կարելի և անա անմիջապէս ուսուցչական ժողով է կազմում և որոշում է չքաւոր աշակերտուհիներին ցուցակը: Հայր Շիրոյեանը նորից դիմում է ժողովարարութեան և ժողովում իւր, պանիր, շաքար, թէյ և ուրիշ մթերքներ աշակերտուհիներին ձրի ճաշ տալու համար: Մի քանի վաճառականներ խոստանում են շարունակաբար մթերքներ հասցնել այդ նպատակին: Գործն արդէն ապահովուած էր և հայր Շիրոյեանը, ձեռք ձեռքի տուած հոգաբարձութեան հետ, մի սենեակ է յատկացնում ճաշարանին և կահաւորում: Որպէսզի գործն աւելի կատարեալ լինի՝ հարկաւոր էր հմուտ ձեռքերի յանձնել այդ ճաշարանը: Այդ առթիւ դիմում է մայրապետ Լուիփ. Թայրերեանի աշակցութեան: Յարգանք մայրապետին, նա ոչ միայն յանձնատուեղաւ գանձապահութիւնը, այլ և սկսում է մթերքներ գնել, իւր շրջանում դրամներ ժողովել: Հայր Շիրոյեանը հրաւիրում է մի քանի ժրաշան տիկիներին և օրիորդների և խնդրում է խնամել ճաշարանը: Այդպէս կազմուած է մի յանձնաժողով, որ կառավարում էր ճաշարանը վեց տարի շարունակ, և յիսուն աշակերտուհի ձրի ճաշ էին ստանում, իսկ տօներին նաև զգեստներ: Ծաշարանը իւր դոյութիւնը պահպանեց մինչև 1918 թ. առանց

նիւթական սղութեան և նա ունի այժմ պատրաստի դրամ 2300 ուլրի:

Գլխոցում ձրի ճաշարան ունենալու օրինակը առաջին անգամ Նորաշէնի դպրոցը տուեց, որին հետեցին շատերը, իսկ հայր Շիրոյեանի նման եռանդի մասին ոչ միայն քաղաքացիները, այլ և գաւառացիները շնորհակալութիւններ յայտնեցին թէ թերթերի էջերում և թէ նամակներով և նրան խրախուսելու համար շարունակեցին նուիրաբերութիւնները: Այդ գործի համար շատ անգամ արձանագրուած է հոգաբարձական գործերում:

Հայր Շիրոյեանը եղել է նաև կրօնուսույց Քիֆլիսի գանազան դպրոցներում: Նա վարել է կրօնուսուցչի պաշտօն իւր Նորաշէնի ծխական, Երկաթուղու դպրոցներում և կուզանեանի գիմնազիայում: Տասն և մէկ տարի շարունակ Նորաշէնի դպրոցի կրօնուսուցչի պաշտօնը օրինակելի կերպով կատարելու համար, նա ստացել է հոգաբարձութիւնից առանձին շնորհակալութիւն:

Կ.

Հայր Շիրոյեանի գործունէութիւնը դպրոցական խնդրում միմիայն Նորաշէնի դպրոցով չէ սահմանափակուած, այլ նրա գործունէութիւնը աւելի լայն ասպարէզ է գտնում Քիֆլիսի շրջակայ հայ գիւղերի մէջ, ուր այն ժամանակները այնքան վտանգուած էր մայրենի լեզուն: Նա մանկութիւնից ծանօթ էր այդ գիւղերի և բնակիչների հետ, որոնք սիրում և յարգում էին տէր հօրը: Նա յաճախ այցելում էր այդ վրացախօս գիւղերին և նրա սիրան ու հոգին վրդովում էր, երբ նկատում էր նրանց տգիտութեան խաւարի մէջ խարխափելը: Այդ հոգեկան բուռն զգացմունքները մի կողմից, միւս կողմից քաջ գիտենալով, որ գիւղի խուլ խաւարի փարատողը դպրոցն է իր մայրենի լեզուի սերմանելովը, գիտենալով, որ զբա-

րոցն է այն շահը, որ կարող է փարատել այդ խաւարը՝ ուժգին թափով ձեռնամուխ է լինում գիւղական դպրոցական գործին: Այդ գիւղերն էին՝ Խաչի Թէլէթ, Շիլինգիս, Վաչլեան, Կոջոր, Տարախմելա և այլն:

Մայրենի լեզուն կորստեան ձիրաններից ապատելու և գրագիտութիւն տարածելու համար՝ 1910 թ. նա ձեռնամուխ է լինում Թէլէթ գիւղում դպրոց բանալուն: Ուշագրութիւն չդարձնելով, որ դպրոցը ոչ մի նիւթական ապահովութիւն չունի, նա իսկոյն նորոգում է դպրոցական շէնքը, նստարաններ գտնում և սկզբնական ծախսերը նոյնիսկ իւր սեփականութիւնից հոգալով, բաց է անում դպրոցի դռները: Եւ ապա սկսում է նրա ապահովութեան մասին մտածել: Թէլէթ ուխտատեղին, ինչպէս յայտնի է, ուխտաւորների հոծ բազմութիւն է գրաւում Համբարձման տօնին, որի արդիւնքը ստանում է ս. էջմիածինը: Հայր Շիրոյեանը դիմում է Նորին Վեհափառութեանը, որ այդ արդիւնքի մի մասը յատկացնուի տեղական դպրոցին: Նորին Վեհափառութիւնը յատկացնում է տարեկան 200 ուրբլի, սակայն դա քիչ էր մի դպրոցի պահպանութեան համար, ուստի դիմում է Կովկ. Հ. Բ. Ընկ. Խորհրդի նախագահ պ. Ս. Յարութիւնեանին և խնդրում աջակցել գիւղացի մանուկների պահպանութեան գործում. պ. Ս. Յարութիւնեանը սիրալիք վերաբերմունք ցոյց տալով հ. Շիրոյեանի խնդրին, շնորհակալութիւն է յայտնում նրա այգալիսի ազգօգուտ գործունէութեան համար և խոստանում իւր կողմից նպաստներ նշանակել վրացախօս գիւղերի հայ դպրոցներին:

Հայր Շիրոյեանը քաջալերուած պ. Ս. Յարութիւնեանի խրախուսանքներից ձեռնարկում է մի շարք դպրոցներ բանալու գաւառներում, որոնց թիւը անցնում է 13-ից և Բար. Ընկ. նպաստներ է նշանակում այդ դպրոցներից մի քանիսին: Այդ ժամանակ յայտնի բարերար

Տ. Աֆրիկեանը լրագրութեան մէջ տեղեկանալով հայր Շիրոյեանի դպրոցական գործունէութեան մասին, հրաւիրում է իւր մօտ նրան և յայտնում իւր շնորհակալութիւնը և առաջարկում իւր օգնութիւնը: Հայր Շիրոյեանը յայտնում է, որ իւր բացած դպրոցները որոշ չափով ապահովուած են, ուստի առաջարկում է Գորլայ շրջանի հայ գիւղերում դպրոցներ բանալ: Պ. Աֆրիկեանը սիրով կատարում է այդ խնդիրը և յատկացնում է Կ. Հ. Բ. Ընկ. միջոցով հինգ դպրոց բանալու համար իւրաքանչիւրին տարեկան 500 ալան ուրբլի: Հայր Շիրոյեանը այդ հաշիւն բաց է անում դպրոցներ Ղարադաղ և Չեզվի գիւղերում, իսկ մնացած 3 դպրոցներին հասանելիք գումարները յատկացնում է Բար. Ընկ. միւս դպրոցներին:

Հայր Շիրոյեանը դպրոցները պաշտօնապէս բանալով դադար չէ առնում: Նա հասկանում է, որ գիւղական դպրոցների համար կարևոր են դասական պիտոյքներ. ուստի՝ նա այս ու այն կողմն ընկնելով, հոգում է դասարանական պիտոյքներ, ուսուցիչների հոգսը քաշում, ամեն տեսակ դիւրութիւններ ստեղծելով նրանց համար թէ բնակարանների և թէ կեցութեան կողմից: Այդ դպրոցների համար ընարել է տալիս հոգաբարձուներ, նոյնիսկ Թիֆլիսի պատուաւոր քաղաքացիներից, որոնք ուրախութեամբ յանձն են առնում ոչ միայն հոգաբարձուի լոկ անունը, այլ և դպրոցի նիւթական հոգատարութիւնը: Այսպէս Տարախմելայի հոգաբարձութեան պաշտօններ յանձն առան պ. պ. Յ. Մելիք Բախտամեան, Գ. Կաֆեան և Ն. Մատինեան, որոնք և նիւթապէս օգնում էին, Կոջորինը՝ Մեանիկեան, որ տարեկան վճարում էր 360 ա.: Վաչլեանի դպրոցի համար յատկապէս դիմում է տեղական նախկին քահանայի որդուն՝ Սմբատ Տէր-Առաքելեանին, այժմ հանգուցեալ, և խնդրում նուիրել դպրոցին իւր տները: Հանգ. Սմբատը սիրալոյսով կատարում է տէր-

հօր խնդիրը և խոստանում նուիրել դպրոցին ոչ թէ գիւղում գտնուած իւր տունը, այլ և նրա մէջ գտնուած բոլոր կահ կարասին և իւր սեփական այգին և բացի դորանից տարեկան 300 ուռլլի: Հայր Շիրոյեանի օրհնութիւնից և խրախուսանքից ոգևորուած, հանգուցեալը իւր խոստումը գրի է առնում և կտակով յանձնում Կ. Հ. Բ. Ընկերութեանը և իւր այդ նուիրաբերութիւնը յաւերժացնելու համար ճաշկերոյթ պատրաստում Վաշլևան գիւղում, ուր հրաւիրուած են լինում թեմիս գեր. Առաջնորդը, Կ. Հ. Բ. Ընկ. Խորհրդի անդամները և Կ. Շիրոյեանը:

Տէր հօր միջնորդութեամբ բացուած է Միրզա-Թէլէթի դպրոցը տեղական կալուածատէր տիկին Եղիսաբէթ Միրզոյեանի նիւթական աջակցութեամբ, որ Բար. Ընկ. միջոցով տարեկան յատկացնում է 600 ու.: Իսկ Դուռնուկի դպրոցը վերաբացուած է 1914 թուին, շնորհիւ հայր Շիրոյեանի անգուլ եռանդի և աշխատութեան:

Հայր Շիրոյեանը ամեն տեղ հասնում է, յորդորներ կարգում և մէկը միւսի եակից դպրոցներ բանում և որպէսզի հնարա որութիւն և դիւրութիւն ունենայ շարունակ այցելելու և իւր դպրոցների պէտքերը հոգալու, նա իւր սեփական ծախսով պահում էր մի ձի և յաճախ, առաւօտեան վաղ, դուրս գնալով քաղաքից, մի օրուայ մէջ այցելութիւններ էր անում 3-4 դպրոցի և հոգալով նրանց կարիքները, երեկոյեան վերադառնում քաղաք: Հայր Շիրոյեանը իւր բացած գիւղական դպրոցներում, բացման օրից սկսած՝ վեց դպրոցի հոգաբարձութեան նախագահի պաշտօն է վարում, գիւղական հասարակութեան մէջ պատրաստի և ձեռնհաս մարդ չլինելու պատճառով:

Սակայն հայր Շիրոյեանը չէ գտնանում դպրոցների անտեսական և ուսումնական կողմերը բարելաւելով, այլ և մտածում է իւր սիրած աշակերտ աշակերտուհիներին

չգրկել հոգեկան մխիթարութիւնից: Թիֆլիսին մօտ գրտնուած Թէլէթ գիւղի դպրոցում իբրև կենտրոնական տեղ, շինել է տալիս մի թատրոնական բեմ և կազմակերպում աշակերտական ցերեկոյթներ և ներկայացումներ: Այդ տեղ են ժողովում մերձակայ գիւղերի աշակերտ-աշակերտուհիները իրենց վարժուհիներով և ծնողներով և այդ ներկայացումները, մանաւանդ իբրև մի նորութիւն այդ գիւղերի համար, առանձին հրճուանք են պատճառում թէ ծնողներին և թէ աշակերտ-աշակերտուհիներին:

Նրա գործութեան պերճախօս վկայ են մամուլի մէջ երևցած այն տեղեկութիւնները, որպիսիները տպագրուեցան այն ժամանակ ի նպաստ հայր Շիրոյեանի:

Ահա թէ ի՞նչ է տպուած 1916 թուի յունիսի 16-ին № 131 «Մշակ» լրագրի մէջ «Դպրոցական հաստատութիւնները Թիֆլիսի շրջակայ գիւղերում» վերտառութեամբ:

Թիֆլիսի շրջակայ վրացախօս գիւղերը կրթական տեսակէտից հեռոնտէ առաջադիմում են, քանի որ գործադրուած աշխատանքն ու ջանքերը՝ հարթելով տմեն արգելափոխներ՝ հասել են իրանց ցանկալի նպատակին, դպրոցներ հիմնելու խնդրում:

Հինգ տարի սրանից առաջ տգիտութեան մէջ խարխափող Թէլէթ գիւղի մէջ, Ս. ա. ք. Շիրոյեանի ակախ աշխատանքներով, հիմնուեց մի խառն դպրոց իր բոլոր յարմարութիւններով, որ այժմ ունի 4 բաժանմունք, որտեղ տգէտ ծնողների ճնշման տակ զբոսնուած մանուկներն իրանց կրթութեան հետ զուգընթացաբար ստանում են նաև մարզասիրութեան, ազգասիրութեան և ազատ մտածելու ու զարգանալու վեհ սկզբունք և գիտակցութիւն:

Երկու տարի առաջ էլ միևնոյն անձի եռանդուն ջանքերով շինուել ու կազմակերպուել են Եվինդիսի, Կուսիսի և Միրզոյեան Թէլէթի, Մուխաթի և Վաշլօվան գիւղերի դպրոցները մի-մի բաժանմունքներով: Կ. Հ. Բ. Ընկերութիւնը այս դպրոցներին յատ-

կացնում է տարեկան 200 ա., իսկ միւս բոլոր պահանջելի ծախսերը հոգում է վերոյիշեալ քահանայն իր տոկոսն աշխատութեամբ՝ մասամբ կողմնակի եկամուտներով՝ արթուն հակիչ հանդիսանալով իր փայտայած և սիրած գործին, ոչ մի դժուարութեան և նութական սղութեան առջ կանգ չառնելով: Այս դպրոցները ներկայումս գիւղերի համար ապագայ մի-մի փարոսներ են ներկայացնում: Չափազանցութիւն չէր լինի ասել, որ եթէ չլինէր տէր-Սարգսի շինարար ձեռքը, վերոյիշեալ գիւղերը մինչև օրս էլ գուրկ կլինէին դպրոցական կասառութիւններից, քանի որ այդ գործը պահանջում է մեծ աշխատանք և վիրախօս ժողովրդի հոգեբանութեան խորին ծանօթութիւն:

Մայիս ամսի 26-ին, հինգշաբթի օրը, Թէլէթ գիւղի ծխական դպրոցում կայացաւ աշակերտական հանդէս, զբաղան և երաժշտական մասով, որտեղ հաւաքուել էր և միւս գիւղերի՝ Կումիսի, Շվինդիսի, Թէլէթի և Վաչուվանի աշակերտութիւնը իրանց ծնողներով:

Հետաքրքրական էր տեսնել, թէ ինչքան կենդանի և գեղեցիկ հայերէնով արտայայտոււմ էին իրանց մտքերը այդ վրացախօս գիւղի զաւակները. ինչ գեղեցիկ և ներդաշնակ երգում, պարում և խօսում էին այդ մատղաշ մանուկները իրանց մայրենի լեզուով: Հանդէսի վերջում աշակերտներին բաժանուեցին մանկական զբոյժներ և ուրախ տրամադրութեան առկ սրուեցին: Շատ ծնողներ իրանց գոհունակութիւնն էին յայտնում և օրհնում դպրոցի վարիչներին:

Իսկ «Հովիտ» շաբաթաթերթի նոյն 1916 թուի № 28-ում, Թիֆլիսի գաւառի վրացախօս հայ գիւղերից, վերնագրի առկ, գրուած է հետևեալ թղթակցութիւնը:

Թեմիս առաջնորդի կարգադրութեամբ Թիֆլիզի ա. մասի հայր գործակալ Ս. ա. ք. Շիոյեանցը այցելեց Շվինդիսի, Տաբախմելի, Խաչի Թէլէթի, Ներքին Թէլէթի, Կումիսի, Կոզայի Մուխաթի և Վաչուվանի

վրացախօս հայ գիւղերի դպրոցները:

Ստուգութիւնը ցոյց տուեց, որ դասաւու վարժուհիները պարտաճանաչութեամբ տարել են իրենց ծանր գործը, բոլորն էլ մեծ աշխատանք են թափել:

Աչքի էին ընկնում Կումիսի և Վաչուվանի դպրոցները իրենց յառաջադիմութեամբ:

Պէտք է խոստովանել, որ վերոյիշեալ բոլոր դպրոցների բացումը մասամբ տէր-հօր շնորհիւ է եղել՝ Խաչի Թէլէթի, Շվինդիսի և Ներքին Թէլէթի դպրոցների բացումը ամբողջապէս տէր-հօր գործն է:

Նա է միջնորդել Ներքին Թէլէթի կալուածատէր հանգուցեալ Ն. Միրզոյեանցների ժառանգներին իրենց ծնողների յիշատակը վառ պահելու համար բանանայ, դպրոց, շինեն եկեղեցի և ունենան դպրոցաւարտ քահանայ, բոլորն էլ իրենց ծախսով: Տէր-հօր միջնորդութիւնը սիրալիք ընդունելութիւն է ունեցել: Այսօր, փառք Աստուծոյ, ունենք դպրոց, վաղը, միւս օրը անշուշտ կունենանք եկեղեցի և դպրոցաւարտ քահանայ ոռճիկով:

Այն, որքան լաւ կը լինէր, եթէ տէր-հայրը զրտնէր մի բարերար փոքր Թոնէթում (Դվալթա) դպրոց բանալու (որի ողորմելի զրութիւնը նրան քաջ յայտնի է. երկու տարի առաջ աշխատեց դպրոց բանալ բայց չար մարդիկ սաղմի մէջ խեղդեցին), որով մեծ բարերարութիւն արած կը լինէր 100 տանից աւելի վրացախօս հայերին:

Մայիսի 26-ին, Խաչի Թէլէթի ծխական երկուս դպրոցը ունէր ցերեկոյթ: Հոգաբարձու հայր Շիոյեանը վաղօրօք հրաւիրել էր վերոյիշեալ գիւղերի դպրոցի աշակերտ-աշակերտուհիներին իրենց վարժուհիներով: Հանդէսը սկսուեց Մեր հայրենիքով, երեխաները արտասանեցին հայերէն և առւերէն ոտանաւորներ:

Պէտք էր տեսնել, թէ ինչ գեղեցիկ արտասանութեամբ և առողանութեամբ վրացախօս երեխաները խօսում ու ոտանաւորներ էին արաստանում:

«Անգրագէտը», «Վարդանի երգը», «Հիմի էջ լանք» և «Մտտունցի Դուրթի» ու «Կող Բագին» ո-

տանաւորները մեծ տպաւորութիւն գործեցին ներկայ եղողներէ վրայ: Իսկ «Գող սիրտը դող» մանկական պիէսի ներկայացումը մեծ զուարճութիւն պատճառեց ամենքին:

Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը հայր տէր Սարգսին և վրացախօս հայերի դպրոցների վարժուհիներին, որոնք սրբութեամբ վարել են իրենց ծանր դործը:

Հայր Շիրոյեանը ցանկանալով, որ Տիխիսի իւր կարգակից հայրերը ևս օգտակար լինեն դպրոցական գործում, հրաւիրում է Տիխիսի հայ քահանաների ընդհանուր ժողով 1916 թ.: Այդ ժողովին, որին նախագահում էր հայր Շիրոյեանը, զեկուցանում է իւր դպրոցական գործունէութեան և իւր յաջողութիւնների մասին և ապա առաջարկում, որ Տիխիսի քահանաներն ևս իրենց ապահովութեան գանձարանի միջոցով բաց անեն վիրախօս վայրերում դպրոցներ: Ընդհանուր ժողովը, Աշոտ քահանայ Թեմուրազեանի պաշտպանութեամբ ընդունում է հ. Շիրոյեանի առաջարկութիւնը, որոշում է դպրոցներ բանալ և յատկացնել սկզբից տարեկան 2,400 ու.: Ընտրւում է անմիջապէս մի դպրոցական յանձնաժողով 5 հոգուց բաղկացած՝ որոնցից մէկն էր հայր Շիրոյեանը և անմիջապէս բացւում է հաւթիսխի և հակաբէթի դպրոցները, որոնք մինչև այժմս էլ գոյութիւն ունեն: Նոյն ընդհանուր ժողովը, բացի այն որ առանձնապէս յայտնում է իւր լիաբուն շնորհակալութիւնը հ. Շիրոյեանին, ընտրում է իւր միջից մի պատգամաւորութիւն 4 հոգուց բաղկացած, ներկայանալու Նորին Վեհափառութեանը, որ այդ ժամանակ գտնւում էր Թիֆլիսում, և յայտնելով հայր Շիրոյեանի դպրոցական բեղմնաւոր գործունէութեան մասին, խնդրում է նրա այդօրինակ եզակի և բացառիկ գործունէութեան համար պարգևատրութիւն վարդապետա-

կան ականակուռ խաչով: Ընտրուած պատգամաւորներն էին՝ Եզնիկ ա. ք. Երզնկեան, Աշոտ քահ. Թեմուրազեան, Գրիգոր ա. ք. Մանդակունի և Յովսէփ քահ. Տէր-Պետրոսեան: Պատգամաւորութիւնը ներկայանում է Վեհափառին և յայտնում է քահանայութեան ցանկութիւնը: Վերջին տարիները քաղաքային ինքնավարութիւնը ընդարձակելով իւր դպրոցական գործունէութիւնը, որ ընդհանուր գրագիտութիւն տարածելու նպատակով բազմաթիւ տարրական ազգայնացրած դպրոցներ բացեց: Նորաշէնի դպրոցի աշակերտութեան թիւը զգալի չափով պակասեց, այդ պատճառով այս 1919—20 ուս. տար. Նորաշէնի դպրոցը, ծխ. ժողովի հաւանութեամբ ժամանակաւոր միտարով փակուեց: Հայր Շիրոյեանին և ծխական հոգաբարձութեանը այդ երևոյթը դրդեց մի այլ աւելի կենսական պահանջին ծառայեցնելու Նորաշէնի դպրոցը, որպէսզի նա լիովին գոհացնէ ներկայ կեանքի առաջացրած պահանջը: Արհեստը ուսման հետ՝ անտեսակոն գոյութիւնը պահպանելու էական միջոցն է: Հայր Շիրոյեանի նախաձեռնութեամբ և ծխ. հոգաբարձութեան որոշմամբ ծխական ժողովի հաւանութիւնն է տրւում, որ Նորաշէնի դպրոցը վերածուի կար ու ձևի դպրոցի և արհեստանոցի: Ընդհանուր ժողովը որոշում է 1920 թ. սեպտեմբերից բանալ առաջարկած տիպի դպրոց: Աշակերտուհիները պէտք է ձեռք բերեն չորսդասեան կրթութեան և կար ու ձևի արհեստի հմտութիւն: Հայր Շիրոյեանի եռանդը և հմայքը կատարեալ երաշխիք են այդ ձեռնարկութեան յաջողութեանը: Չքաւոր ընտանիքի զաւակները այդտեղ վերջացնելուց յետոյ՝ հնարաւորութիւն կունենան իրենց օրեկան պարէնը հայթայթելու և օգտակար լինելու ոչ միայն իրենց ընտանիքներին, այլ և զիւղական դպրոցներին, որոնք կարիք ունեն այնպիսի վարժուհիներէ, որոնք միաժամանակ և կարու ձևի հմուտ գոտաւոր լինեն:

Նրա կեանքն ու գործունէութիւնը բնորոշելու համար այստեղ մենք առաջ ենք բերում Նորին Վեհափառութեան ա. տ. Գէորգ Ե. Կաթողիկոսի կոնդակի պատճէնը ամբողջութեամբ: Ահա այդ կոնդակը. —

ԳԷՈՐԳ ծառայ Յիսուսի Բրիտոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:

Արժանապատիւ Տ. Մարգրիտ աւագ քահանայի Շիոյեանի՝ միաբանի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցւոյ Տփխեաց, Հարազատի Մայր Աթոռոյս և սիրելւոյ Մերոյ զաւակի հոգեւորի, ողջոյն և օրհնութիւն Հայրապետական:

Պատուէր Տեառն ունելով առաջի աչաց, եթէ մըշակ պիտանաւոր արժանի է լատ ամենայնի վարձուց իւրոց և խրախուսանաց Տեառն իւրոյ, հոգւով պատաղեցաք ունելով առաջի աչաց Մերոյ հանրագիր խնդիր ծխականացդ քոյոց, որ յՅ1-ն յունիսի տարւոյս, որպէս և պաշտօնակցացդ սպասաւորաց Տեառն Տաճարի՝ անդամոց քահանայից «Մասնաժողովոյն Գանձարանի Քահանայից», որ ի 15 յուլիսի տարւոյս, որոց միահաղոյն զարժանիսդ ի վեր առաջի աչաց Մերոյ առեալ, զհաճութիւն Մեր խնդրեն վարձատրել զՔեզ վասն ջանիցդ և օգտաշատ գործոյդ:

Ի մանուկ տիոց զՔեզ գիտելով ուշիմ և ջանադիր ի դործ, յոր կոչեցար, ի պաշտաման քահանայութեանդ առաւել ևս ցուցեր զանձինդ արժանիս, եթէ որպէս հովիւ ջանադիր իփոյթ մխլթարութեան հօտիդ, ի հոգածութիւն տնանկին և աղքատին, ի խնամարկութիւն կարօտելոց դպրոցասէր մանկուոյն, զնոցայն հայթայթելով ի բարեպաշտ որերաց զաննդեանն և զազանելացն պիտոյս, եթէ որպէս քահանայ Տեառն ի բարեկարգութեան եկեղեցւոյդ ծխականիդ, բարեկարգելով զնա և տալով նորոգել զհնացեալն անպաճոյճ եկեղեցին և վերածելով զնա ի պաշտաճաւոր վայելչական

պատկեր, որպէս վայել է Տան և Օթեանի Բարձրելոյն, այլ և զկալուածս եկեղեցւոյն ածեալ ի բարեկարգ վիճակ, տալով նորոգել զայնս նպաստիւք հօտիդ ի մըշտնջենական արդիւնաւորութիւն եկեղեցւոյդ, եթէ որպէս բարեկարգիչ եկեղեցեաց քաղաքին Տփխեաց, հանապազ զհանգիստ անձիդ մոռացեալ՝ զվայելչութիւն Փառաց Տաճարացն այնոցիկ ունելով ի մտի և ածելով զայնս ի բարեշուք տեսիլ, հսկելով որպէս ներքին, նոյնպէս և արտաքին բարեկարգութեանն, եթէ որպէս դպրոցասէր հովիւ, ոչինչ խնայելով աշխատութիւն տալ բանալ զդրունս եկեղեցական դպրոցաց մերոց, մերթ բաղխելով զդրունս մեծամեծաց մերոց բարեգործաց և մերթ զաղքատին ընկալեալ զհամեստ լուճայս և այդ ամենայն գետ առատարուղիս յոռոգումն հոգեւոր անդաստանին մերոյ և մտաւորականի համազուգեալ, մանաւանդ ի վայրս, յորս ուսումն մայրենի լեզուի և գալլութեան ամենեին մոռացեալ, յօտար լեզու և ի հնչիւն ապաւինեալ՝ զհայրենեացն մերոց մեծագոյն ժառանգութիւն խալառ մոռացման և կորստեան կայր յեզր, զայդ ամենայն ապահովեալ յանսայթաք և յանվրէպ պահպանութիւն՝ ի կրթութիւն մատաղ սերնդեան մերոյ:

Արդ զայս ամենայն ունելով առաջի աչաց, հաճոյ թուեցաւ Մեզ, որպէս Դիտապետի եկեղեցւոյս, դիմքոյդ պաշտօնէի զարգասիս մեծամեծ ծառայութեանց վարձատրել մեծագոյն չափով, որ հայի ի վարձատրութիւն քահանայական դատու մերոյ աշխատաւորի: Արտօնեմք և հրամայեմք կրել ի կուրծսդ զապահովու խաչ վարդապետական ի վարձատրութիւն անցելոց քոյոց վաստակոց և քրտանց, և ի խրախոյս ապագայ ջանիցդ և հոգածու խնամարկութեան: Քաջալերականիս այս նշան արտաքոյ և յոչ օրինակ այլոց, զի և վաստակոցդ չափ արտաքոյ, այլ յօրինակ այլոց կարգակից պաշտօնէիցդ:

Յուսալ յոռամք, եթէ խնամք Բարձրելոյն առաւել ևս ունի բնակիլ ի Քեզ, ի գործ բարի, ի վաստակ եռանդուն և ի գոհունակութիւն արդար:

Ողջ լիբ, դորացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ
յաւէտ: Ամէն:

Ի 27 օգոստոսի 1916 ամի

և ըստ Տոմարիս ՌՅԿՆ ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՒՂ.

ի Հայրապետութեան Մերում Ե. ամի ԱՄՆԸ. ՀԱՅՈՑ

յԱբարատեան Վ. Աթոռ Ս. Էջմիածնի

ի Վաղարշապատ

Թ. 1824

Իբրև վերջաբան այս ամենի, այստեղ, հրապարակով
ընդգծում ենք այն փաստը, որ մարդն է բարձրացնում
իւր կոչումն ու պաշտօնը: Մարդը, եթէ նա իր հոգեկան
զգացմունքներով նուիրաբերում է իւր ընտրած ասպա-
րէզին՝ նրա առաջ ոչնչանում են ամեն տեսակ խոչընդո-
տներ և նա կորողանում է հասնել իւր կոչման բարձրու-
թեանը:

Այս տեսակէտից ահա, հայր Շիոյեանն իր կոչումն
ու պաշտօնը հասցրել է այն աստիճանին, որ մեր հասա-
րակական կեանքի ամեն մի շրջանում՝ ամենայն իրա-
ւամբ իրաւունք ունի ասելու, որ գործը շատ է, բայց
մշակները բիշ:


Ու երանի նրանց, որոնք մեր կեանքի հասարակու-
թեան անթիւ ու անհաշիւ գործերում՝ իրենց աշխատան-
քի լուծան կըձգեն:

Այս տեսակէտից հայր Շիոյեանի XXV-ամեայ գոր-
ծունէութիւնը անգնահատելի պսակ է, որ զարդարում է
նրա ջրտնաջան ճակատը, պատիւ իրեն, որպէս վաստա-
կաւոր մարդու:



ՅՈՐԵԼԻԱՆԱԿԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔՆԵՐ



ԳէՈՐԳ Ժառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն պատրիարք համազգային նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:

Արժանապատիւ Տ. Սարգիս աւագ քահանայի Շիրոյեան միաբանի Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցւոյ Տփխեաց, հարազատի Մայր Աթոռոյս և սիրելոյ Մերոյ ողջոյն և օրհնութիւն Հայրապետական:

Ի յայտարար-գրութենէ Յօրելիանական Յանձնաժողովոյ ծխականաց Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցւոյ ի 31-ն դեկտեմբերի 1919 ամի տեղեկացաք, զի բարեպաշտօն ծխականք եկեղեցւոյն ի տրիտուր 25-ամեայ աշխատանացդ կամին պատուել զՔեզ յօրելիանական հանդիսիւ:

Հաճելի է Մեզ հանապազ լսել զարիաջան աշխատութենէդ և ի բարի համբաւոյ Քումմէ թէ որպէս հովիւ հօտի Տեառն ի քսան և հինգ ամաց հետէ ջան ի կիր արկանես ի բարեզարգութիւն եկեղեցւոյդ և ի պայծառութիւն նորին: Առաւել ևս գովեմք զՔեզ, զի Պու, որդեակ Մեր հոգևոր, փոյթ ունիս կրթութեան զաւակաց մերոց օտարախօսաց ի Վիրս, որպիսի գործ յոյժ սիրելի է Մեզ: Զայդ գործ բարի Աջ Տեառն զօրացուցէ զՔեզ և բազուկ Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ Քո:

Ունելով առաջի աչաց զջանազիր Քոյդ ծառայութիւն և փոյթեռանդն հոգածութիւնս Քո, որ ըստ ամենայն ցուցանել նկրտիս ի պաշտամանդ, օրհնեմք զՔեզ և մաթթեմք ի Տեառնէ կալ և մնալ Քեզ առ միշտ հովիւ բարի, և զօրացուցանել զՔեզ ու բաշխել Քեզ եռանդ յարատև ի գործդ. Ամէն:

Ի 2/15 Յունուարի 1920 ամի

Լստ Տօմարիս ՌՅԿԹ ԳԷՈՐԳ Ե. ԿԱՔՈՒՂ.

Ի Հայրապետութեան Մերոյ Թ. ամի ԱՄԵՆ. ՀԱՅՈՑ ԵՍՏՐԱՐԱՏԵԱՆ Մ. Աթոռոյ Ս. Էջմիածնի
 Ի Վաղարշապատ
 Թ. 7

[Faint, mostly illegible text from the reverse side of the page, appearing as bleed-through or ghosting.]

Յօրեկանական Մասնաժողովին.

Հայրապետական Դիւանս, ըստ պատուէրի Նորին Սրբութեան պարտք է համարում զրեւ Ձեզ հետեւալը: Նորին Վեհափառութիւնը, որ միշտ նախանձախնդիր է հայ հոգևորականութեան և Հայ եկեղեցու լրութեան բարի համբաւին, առանձին հաճութեամբ լսեց Յանձնաժողովիդ 1919 թ. դեկտեմբեր 31-ի № 1 գրութիւնը, որ վերաբերում է Տ. Սարգիս աւագ քահանայ Շիրոյեանի 25-ամեայ հոգևոր ծառայութեան առթիւ Նրան յօրելիանական տեսքով պատուելուն: Նորին Սրբութիւնն օրհնում է Ձեզ այդ բարի գործի համար, զրա մէջ տեսնելով այն կապը, որ Հայ ժողովուրդն ունի դէպի իր եկեղեցին, և որ նա ի ժամու գիտէ արժանին տալ եկեղեցու աշխատաւորներին՝ նոցա թէ եկեղեցուն և թէ ժողովրդին հաւատարմութեամբ և եռանդով ծառայելուն համար:

Հայրապետական Դիւանս սորա հետ Յանձնաժողովիդ ուղարկելով Հայրապետական Սրբատառ Կոնդակը, խնդրում է յօրելեանի օրն յանձնել Տ. Սարգիս աւագ քահանային:

Դիւանապետ՝ ԱՐՄԷՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

Գորովագուր Սարգիս ա. ֆ. Շիրոյեանի XXV-ամեայ եռանդալից գործունէութեան Յօրեկանին

Հայր!

Այսօր, այստեղ մենք, եկել տօնում ենք կեանքիդ գարունը, սիրուն գարունը: Հասակիդ աշնան գարունն այսօրւան՝ մի նոր գարուն է, գարուն աննման:

Քո մանուկ կեանքի, էն վառ բերկրանքի և ոչ մի օրը՝ սրան չի յանգի: Այսօրւան օրից, դու մի նոր մօրից վերածնում ես գործելու նորից:

Եւ այդ գործը հայր, ուղիդ քառորդ դար՝ բղխել է քեզնից, բղխել անդադար: Հազար մի գործում քսանհինգ տարի հանդիսացել ես մրցող քաջարի:

Իո՛ւ հայր ես եղել, ինքդ քեզ նեղել, քեզնից խընդրողին դժգոհ չես թողել: Սիրել ես ծուխդ, ծխից սիրւելով, յարգել կոչումդ՝ յարգել կոչումով:

Միշտ քո կարգակից դասից շատերը՝ ցոյց են տուել քո խաղացած դերը: Որպէս քաջ հովիւ, որպէս քահանայ՝ քո անձն ես զրել քո հօտի վրայ:

Որպէս կրօնուսոյց և հոգաբարձու՝ երբէք չես եղել պաշտօնեայ վարձու: Դպրոց ես սիրել, դպրոց հիմնարկել, կրթութեան գործը հոգով մէկ յարգել:

Եւ այդ դպրոցով վերախօս գիւղում մայրենի լեզուն հասել է և տուն: Գիւղերում արած այդ քո բարիքը այսօր հոգում է ուսման կարիքը:

39

Որպէս գործակալ և բարեկարգիչ՝ հազիւ թէ լինի քեզ նման շատ քիչ: Կոնսիստորիայում որպէս հին անգամ՝ քո խորհուրդներն են լսել շատ անգամ:

Որպէս հոգևոր մի իշխանաւոր՝ պարտաճանաչ ես եղել ամեն օր... Բայց սրն ասենք, հայր, որ մէկը թուենք, քո լաւ գործերից որը զրուատենք:—

Յօրեյիանական Յանձնաժողովը՝ իր այս ուղերձի ամեն տողովը քեզ ցանկանում է կեանք-առողջութիւն, անսպառ եռանդ, ոյժ-կարողութիւն...

Յանկանում է քեզ կեանքի նոր գարուն՝

Նոր յիսնամեակի պատուով դարձարուն:

Կեցցէ Շիրոյեան Սարգիս քահանան, կեցցէ

Միշտ կեցցէ հայրը պատուարժան:

Նախագահ Յօրեյ. Յանձ. Ոշխ. Բ. Արղութեան-Երկայնաբազուկ
Փոխ-Նախագահ՝ Բժ. Արիստակէս Զարգարեան
Մայրապետ կուսանաց անագատի՝ Հռիփսիմէ Թայիրեան

- | | |
|--------------------------------|-------------------|
| Անդամներ՝ | Գ. Աֆրիկեան |
| Լեւոն Գ. Եւանգուլեան | Յակովբ Դանդուրեան |
| Գարրիէլ Զ. Թամամչեան | Գր. Աւետիսեան |
| Գեորգիոս Զ. Զորարեան | Նիկ. Մարգարեան |
| Վասիլ Դիդգուրաբեան | Արզար Արուլեան |
| Գէորգ ա. քահ. Մեհրաբեան | Յ. Աբաղեան |
| Արտաշէս քահ. Գափամանեան | Ռոստոմ Աւանեան |
| Լեւոն Մհերեան | Աղա-Բարեանց Ա. |
| Քարաուղար՝ Սարգիս քահ. Իփակեան | |



17 4011

4678



2013

<< Ազգային գրադարան



NL0031485

4521